



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԺԱ ՏԱՐԻ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 1935 11^{me} Année - Octobre 1935

Խմբագրական

Արթնցէ՛ք

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Ճշմարիտ եկեղեցին

Սուրբ Օգոստինոսի խոստովանութիւնները

Թարգ. Մ. Վէֆիւեան

Զ. Բ. Պուտաքեան

Շնորհաց ծովէն

«Դուք էք Իմ վկաներս»

Սամուէլ Ծառուկեան

Կենաց ամուսնութիւն

Յիսուս ամենուն Տէրը

Յիսուս դուռը կը զարնէ

Սերտոգուծ իւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Վ. Ս.

Իրանկանց սիւնակ

Փոքրիկ աղջիկն ու բանաստեղծը

Յ. Բ.

Զանազան լուրեր



ACKNOWLEDGMENTS

ԺՈՋԷՑ Կ. ՊԱՐՄՈՒՄԵԱՆ

19870613

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —


MARSEILLE (France)

Le Gérant : M. le PASTEUR KALTENBACH

ԲԱՆԲԵՐ

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. Է. 14



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր Կանգիստը մանկու խոստումնքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ասենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԱ. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1955

ԹԻԻ 10

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՐԹՆՑԷՔ

Արթնցի՛ր դուն որ կը քնանաս եւ կանգնէ մե-
ռելներէն, ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ:

Եփես. Ե. 14

«Բանբեր»ի անցեալ թիւին մէջ ջանացինք
հաստատել այն ճշմարտութիւնը թէ ինչպէս
մարդկային փրկութեան գործին մէջ, նոյն-
պէս նաեւ արթնութեան մեծ շարժման մէջ կայ
ընելիք Աստուծոյ կողմէն, կայ ընելիք նաեւ մար-
դուն կողմէն, ու ասոնք իրարու խառնուելու չեն:
Մարդա Աստուծոյ ընելիք գործին միջամտիս ըլ-
լալու չէ, իսկ իր պարտականութիւնն ալ Աստու-
ծոյ ձգելու չէ, հապա հաւատարմաբար հնազան-
դելու է Անոր որ իրեն կը կանչէ:

Տէրը Մաղաքիայի միջոցաւ կ'ըսէ ոչ միայն
Իսրայէլի, հապա բոլոր ազգերուն եւ բոլոր հա-
ւատացելոց «Բոլոր տասանորդը գանձատունը
տարէք... (ձեր ընելիք պարտականութիւնը կա-
տարեցէք) եւ ասով՝ զիս փորձեցէք կ'ըսէ Զո-
րաց Տէրը, թէ արդեօք երկիրքի պատուհաննե-
րը չե՞մ բանար եւ ձեզի օրհնութիւն թափեր...
(Մաղք. Գ. 10):

Արթնցի՛ր դուն որ կը քնանաս, եւ կանգնէ՛
մեռելներէն, (այս է որ դուն ընելու ես, զգաս-
տանալու եւ տեսնելու ես քու հոգեւոր թմբու-
թիւնդ, տեսչալու ես ազատուելու անկէ եւ կամք
ընելու ես քունիդ պատճառները մէկզդ ընելով
կանգնելու Աստուծոյ առջեւ, յոժարակամ հնա-
զանդելու, այն ատեն արդէն Քրիստոսի լոյսը,
որ միշտ պատրաստ է զքեզ լուսաւորելու, պի-
տի տեսնես եւ պիտի լուսաւորուիս: Զէ՛ թէ լոյ-
սը, շնորհքը մեզմէ հեռացած է, այլ մենք
հեռացած ենք անկէ: Զայն գտնել մեր պարտքն
է, մեր գործն է:

Ուրեմն ի՞նչպէս կրնանք վերագտնել զԱյն:

Յովելեայ Բ. 12ի մէջ լուսաբանութիւն մը ու-
նինք, «Հիմա ալ Տէրը այսպէս կ'ըսէ, Ինծի դար-
ձէք ձեր բոլոր սրտովը»: Ո՛չ միայն դէմքը Աս-
տուծոյ դարձնել, ինչ որ շատերու սովորութիւնն
է, կամ ձեռքերը վեր բարձրացնել աղօթքի պա-
հուն, որ ատեն շատ անգամ սիրտը ու միտքը
տարբեր տեղեր կը գտնուին կամ տարբեր բա-
ներով կ'զբաղին, հապա Աստուծոյ դառնալ սըր-
տով եւ բոլոր սրտով, այսինքն հաստատ մտադ-
րութեամբ թէ Տէրոջը դառնալս ինչ ալ արժէ
ինձ, որքան ալ ծանր նստի իմ վրայ, այսու ա-
մենայնիւ ես Անոր կ'ուզեմ դառնալ, Անոր համար
կ'ուզեմ մնալ եւ Անոր տրամադրութեան տակ կը
զրուիմ այս բոլորէն սկսեալ: Այսպէս բրաւ Սո-
լոմոն: որ երբ Տէրոջմէ ընտրուեցաւ որպէս հեթա-
նոսաց առաքեալ, անիկա մարմինի եւ արիւնի
չհարցուց: Այսպիսի տրամադրութեամբ զինուող
մը չկրնար չքարոզել, չկրնար արթնութեան օրհ-
նութենէն զրկուիլ, Աստուած անիրաւ չէ, Անիկա
աշառութիւն ալ չըներ:

Այս յոժարութիւնը կ'առաջնորդէ զմեզ ծովա-
պահութեան, ոչ միայն սննդառական ծովապա-
հութեան, որ ինքնին լաւ բան մըն է, հապա մա-
նաւանդ ներքին սրտի ծովապահութեան, որ ա-
տեն ներքին բոլոր փափաքները, զգացումները,
ներքին պոռթկումները կը սանձահարուին, կը
լռեցուին աւելի բարձր բանի մը ուրախութիւ-
նով եւ անոր գանձերովը լեցուելու: Ծովապա-
հութիւն, ներքին սենեակը մտնելու առումով,
ուր Աստուծոյ գաւակը կ'սկսի ինքնամիտքուե-
լու եւ որ անցեալ ու ներկայ վիճակը շարժա-
պատկերի մը նման կ'անցնին իր աչքերուն առ-
ջեւէն Ս. Հոգւոյն լոյսին տակ, ցոյց տալու մութ
տեղերը այդ ապակեպատկերներուն, բիծերը, ա-

նորոշութիւնները որոնք հանուելու են: Ա՛հ, այս ծոմապահութիւնը կը տանի զմեզ ինքնագիտակցութեան, ինքնաճանաչման: Հոն հաւատացեալը ինքն իր մէջ է, ճիշդ այնպէս ինչպէս որ է աներկբայ: Հոն կը տեսնէ արգելքը, որ արթնութեան ու հոգեւոր կեանքին մեքենան կասեցուցած է: Հոն կ'սկսի Բ. գալը լալ ու սգալ եւ սիրտը պատուել:

Այս անհատական անձնաքննութիւնը խորանալով ներքին մարդուն մէջ սրբացման յաջող գործ մը կը բացուի: Ս. Հոգին կ'սկսի զատել անշահը ճշմարտութենէն եւ մարմնաւորը հոգեւորէն, ու հաւատացեալը կը տեսնէ ուրախութեամբ հոգեւոր կեանքի ուժնաբեկութիւնը իր մէջ: Նոր աղօթքի հոգի մը, մինչեւ հիմա անծանօթ սէր մը անապաշխար հոգիներու հանդէպ, յարաժամ աղօթքի, փառաբանութեան կեանք մը կ'սկսի իր մէջ, որ անդուսպ վկայութեան գերբնական հուրովը հրահարուած է. — «Ձայն որ տեսանք ու լսեցինք, չենք կրնար չը խօսիլ»:

Հաւատացեալը անձնապէս երբ Թո՛ղ կէտին հասած է, չկրնար առանձին Գեալ, հապա կը փնտռէ հաւաքականութիւնը, ընկերը, մէկը կամ երկուքը, որպէսզի երկու կամ երեք ըլլան, եկեղեցին կազմեն: Այս է որ ցոյց կուտայ Յովել Բ. 16ի մէջ «Ժողովուրդը ժողովեցէք, ժողովքը սրբեցէք, ծերերը հաւաքեցէք, աղաքները ու կաթնկեր մանուկները ժողովեցէք, փեսան իր սենեակէն թող ելլէ, հարսը իր առագաստէն, Տէրոջը պաշտօնը կատարող քահանաները սրահին ու սեղանին մէջ լան ու ըսեն, Ով Տէր Քաւ ժողովուրդիդ խնայէ»:

Հոս եկեղեցին իր լման միաբանութեան մէջ կը գտնուի: Երբ հաւատացեալներ անհատապէս եւ հաւաքականօրէն այդ կէտին հասած են, մեքենան կ'սկսի քալել, Տէրը իր խոստման համաձայն պիտի շարժէ իր բազուկը, պիտի գործէ, «մեծ բաներ պիտի ընէ», իր հոգին պիտի թափէ ամէն մարմնի վրայ, տղոց ու աղջիկներուն, ծերերուն ու երիտասարդներուն, ծառաներուն ու աղախիներուն վրայ, անխտիր:

«Երանի՜ թէ երկինքը ճեղքելով վար իջնէիր,
Քու ներկայութենէդ լեռները հալէին,
Խորները բռնկեցնող կրակի պէս,
Ջուրերը եռացնող կրակի պէս,
Որ Քու անունդ թշնամիներուդ յայտնէիր,
Ու ազգերը Քու երեսէդ դողային» Ես. 42. 1-2:

Ամէն, Ամէն ու Ամէն:

Բայց կ'արժէ որ ակնարկ մըն ալ նետենք ինքնամոլորման եւ անձնաքննութեան մանրակրկիտ կէտերը տեսնելու: Ի՞նչ են այն արգելքները որոնց կը հանդիպինք առաջին անձնաքննութեամբ:

Երբ Աստուծոյ զաւակը քանի մը վայրկեան երեւակայութեան առջեւէն կ'անցնէ աշխարհն ու անոր թոհ ու բոհը, անոր անկումն ու կործանումն զնացքը այդ վայրկեանին կարծես իր ձեռքը երկնցնել կ'ուզէ բռնելու զայն եւ հազազանգը հնչեցնելու կոկորդալիբ ամենուն, ցոյց տալու վտանգը, որուն բոլորովին անտեղեակ, իր աշխարհային ցանկութեանց զինիովը արբշիտ մարդկութիւնը կը քալէ դէպի անգունդ: Բայց ինք կը գտնէ որ կոկորդը չորցած է, ձայնը չեղեր, միտքը չգորեր բառ մ'իսկ գտնելու, լեզուն չշարժելու եւ բռնելու: Ա՛հ, Աստուծոյ զաւակը անստարբերութեամբ մրափին մատնուած է, անոր մէջ հոգիներու հանդէպ սէրը պակասած է, հակառակ անոր որ ինքը կ'աղօթէ ժողովներու մէջ, եկեղեցիի անդամ մը եւ կարեւոր անդամ մըն է, կը յարգուի իբր այն, կը սիրուի իբր այն, բայց կը պակսի՜, կը պակսի իր մէջ այն ոյժը: Այս անտարբերութիւնը երեւան եկաւ իր զանցառութենէն: Ոչ միայն մեծ զանցառութիւններէ, հապա պզտիկ զանցառութիւններէ ալ, որոնք զինքը ի վերջոյ անտարբեր ըրին: Զանցառութիւնը զիրաւ պաշարող բայց կաշկանդող մեղք մըն է:

Զգանցառութիւններու առաջին երեւոյթը եղբայրներս, ապերախտութիւնն է: Որքա՛ն վայրած ենք Տէրոջը շնորհքն ու ողորմութիւնները, նիւթական, ընկերական, մտաւոր, բարոյական, հոգեւոր, որոնց վրայ մտածեցինք որպէս մի բնական բան: Կարծես թէ Աստուած պարտական էր զանոնք մեզի տալու: Վայելեցինք զանոնք առանց շնորհակալութեան եւ երախտագիտական զգացումներու: Ա՛հ, ինչ լաւ պիտի ըլլար, երբ մենք ալ այն Պարսիկ իշխանին նման օրական ժամ մը մեր հովուական հանդերձներն հազած միտք բերէինք մեր նախկին վիճակը, որմէ նա անհամեմատօրէն բարձրացուց զմեզ: Քննենք ինքզինքնիս այս կէտին մէջ:

Երկրորդ երեւան բերուած արգելքը մեր անհատական աղօթքի կեանքի զանցառութիւնն է: Կ'աղօթենք, բայց երբեմն միայն բառեր: Կ'աղօթենք, բայց թերեւս ցրուած մտքով: Հազարաւոր Տէրոջը զաւակներու դառն փորձառութիւնն է եղած այս: Կ'աղօթենք առանց Հոգիով լեցուած ըլլալու, լոկ իբր սովորութիւն, իբր պար-

տակա՞նութիւն, ո՛չ իբր բնական ներքին պէտք մը: Այս պարագան խիստ էական է եւ Աստուծոյ զաւակներուն խոր մտածութեան եւ անձնաքննութեան առարկայ ըլլալու արժանի: Մեր աղօթքի կեանքին հոգ տանինք, որ ըլլայ իրական աղօթքի կեանք, քանզի այդ զանցառութեանէն մեծ փաստներ կրած են Աստուծոյ զաւակներ եւ Աստուծոյ եկեղեցիները:

Երրորդ երեւոյթը շնորհաց միջոցներու զանցառութիւնն է: Նկատի առնենք հեղ մը մեր գործունէութիւնը եւ այն պարագաները, որոնց մէջ պզտիկ արգելքներ միայն պատճառ եղան մեզի հոգեւոր ժողովներէ բացակայելէ եւ որոնց մէջ թերեւս պիտի օրհնուէինք եւ օրհնութիւն ըլլայինք: Ծուլութիւնը, մարմնի տկարութիւնը յաղթեց մեզի, մինչդեռ եթէ Տէրոջը ձայնին լսելու ըլլայինք այդ երկու օրհնութիւնները, կամ անոնցմէ մին կամ միւսը կրնայինք վայելել եւ վայելեցնել: Շնորհաց այդ միջոցները միայն առնելու համար չեն, ալ տալու համար ալ: Հոգեւոր հաւաքոյթները պտղաբեր կրնան ըլլալ միայն այն ատեն, երբ Աստուծոյ զաւակները այս մտքով ժողովներու կ'երթան: Հաղորդութեան խորհուրդն ալ շնորհաց միջոց մըն է որ յաճախ զանց կ'առնուի եղբայրներու կողմէ այլեւայլ ջնջին պատճառներով: Մեծ սխալ մըն է Աստուծոյ զաւակներուն կողմէ այս շնորհաց միջոցէն ինքզինքնին զրկել: Հարկ է որ անոնք լաւ քննեն Աստուծոյ Խօսքը եւ Անոր կամքը իրենց համար եւ այդ պատճառները պիտի չքանան ու իրենք Տէրոջը հետ տեսանելի միջոցով մը հաղորդուելով ներքին մեծ շահերու պիտի տիրանան:

Շնորհաց միջոցներ են մեր յարաբերութիւնները իրարու հետ, մեր սաղմոսերգութիւնները, խօսակցութիւնները եւայլն եփես. Ե. 19ի և Կող. Գ. 16ի համաձայն:

Այս շնորհաց միջոցներու զանցառութիւնը անմիջապէս անտեսանելի միջնորդներ կը բարձրացնէ մեր եւ եղբայրներու, մեր եւ Աստուծոյ միջեւ, որով մտերիմ յարաբերութիւնը կը դադրի: Կ'արժէ որ այս շնորհաց միջոցներու զանցառութեանց մասին յատկապէս մտածենք: Տէրը օգնէ մեզի որ գտնենք զանոնք եւ Ս. Հոգիին միջոցաւ արմատախիլ ընենք մեզմէ:

Յ. Ն. Ղ.

(Շար.)



ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՃՇՄԱՐԻՏ ԵԿԵՂԵՑԻՆ

○○○○○○○○○○

Կ'ուզեմ պատկանիլ միակ ճշմարիտ Եկեղեցիին, եկեղեցին՝ ուրկէ դուրս փրկութիւն չկայ: Ձեմ ուզեմ հարցնել Ձեզի, ուր կ'երթաք Կիրակի, Ձեզի կը հարցնեմ «Կը պատկանի՞ք միակ ճշմարիտ եկեղեցիին»:

Ո՛ւր է այս միակ ճշմարիտ եկեղեցին, ի՞նչ տեսակ է ան, որո՞նք են այն նշանները որոնցմով կրնայ ճանչցուիլ ան: Կրնաք վերոյիշեալ բոլոր հարցումները դուք ձեզի հարցնել: Ձեր ուշադրութեան քանի մը վայրկեանները ընծայեցէք ինձի, եւ պատասխանները պիտի տամ ձեզի:

Միակ ճշմարիտ Եկեղեցին բաղկացած է ամէն անոնցմէ՝ որոնք կը հաւատան Տէր Յիսուսին: Ան բաղկացած է Աստուծոյ բոլոր ընտրեալներէն, այր ու կին ապաշխարածներէ, բոլոր ճշմարիտ քրիստոնեաներէ: Որու վրայ որ կրնաք բնորոշել (յատկապէս տեսնել) Հայր Աստուծոյ ընտրութիւնը, Որդին Աստուծոյ արեան սրսկումը, Հոգին Սուրբ Աստուծոյ սրբութեան գործը, այդ անձին մէջ կը տեսնենք Քրիստոսի ճշմարիտ եկեղեցւոյն մէկ անդամը:

Միակ ճշմարիտ եկեղեցին այն է, որուն անդամները ինքնութեան նոյն նշանները կը կրեն: Բոլորը Ս. Հոգիէն ծնած են, բոլորը զղջացած սրտեր ունին առ Աստուած, հաւատք՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի վրայ՝ միացած սրբութեան կեանքով մը...: Ասոնք բոլորը կ'ատեն մեզքը, բոլորը կը սիրեն Յիսուս Քրիստոսը: Կը պաշտեն տարբեր եւ զանազան ձևերով. անոնցմէ ոմանք կը գործածեն աղօթքի ձև մը, ուրիշներ այդ ձևը չունին, ոմանք ծունկի կուգան, ոմանք կը կայնին, բայց բոլորը մէկ սըրտով կը պաշտեն, անոնք բոլորը միեւնոյն Հոգիով կ'առաջնորդուին, բոլորը միեւնոյն հիման վրայ կը շինեն, բոլորը իրենց կրօնքը միեւնոյն զրքէն կ'առնեն, որն է Ս. Գիրքը: Բոլորը միեւնոյն կեդրոնին, Յիսուս Քրիստոսի շուրջ միացած են, բոլորը հիմակուրէն կրնան երգել մէկ սրտով «Ալէլուիա» եւ միաձայն պատասխանել «Ամէն»:

Միակ ճշմարիտ եկեղեցին կախում չունի մարդկային առաջնորդէ մը, հակառակ այն արժէքին որուն արժանի կրնայ սեպուիլ անոր:

անդամներուն Աւետարանը քարոզողները... հապա անիկա միայն մէկ Գլուխ ունի, մէկ Հովիւ, մէկ Եպիսկոպոս, Յիսուս Քրիստոս: Միայն Ինք կ'ընդունի այս եկեղեցւոյն անդամները, որոնց՝ քարոզիչը դուռը կը ցուցնէ: Մինչեւ որ Ան այս դուռը չբանայ, մէկը չկրնար գայն բանալ, ո՛չ եպիսկոպոս, ո՛չ կոմիտէ (մասնախումբ) ո՛չ սինոդ (հոգեւոր ժողով): Թող մէկը ապաշխարէ, թող հաւատայ Աւետարանին, այդ վարկեանէն այս եկեղեցւոյ անդամը կ'ըլլայ: Խաչին վրայի աւագակին նման կրնայ կարելիութիւն չունենալ մկրտուելու, բայց ան ջրով մկրտութենէն աւելի բարձր բան մը ունի, Հոգւոյն մկրտութիւնը, կըրնայ առիթը չունենալ մասնակցելու Տէրոջը ճաշին, բայց ան հաւատքով՝ իր կեանքին իւրաքանչիւր օրուան մէջ «Քրիստոսի մարմինը» կ'ուտէ, եւ «Անոր արիւնը կը խմէ» եւ երկրին վրայ մէկը չկրնար գայն արգիլել: Ան կրնայ եկեղեցւոյ հաղորդութենէն կտրուիլ մարդկային եպիսկոպոսներէն, եւ զրկուիլ դաւանող եկեղեցւոյ արտաքին կարգերէն, բայց աշխարհի բոլոր կղերականութիւնը չկրնար գայն վռնտել ճշմարիտ եկեղեցիէն:

Միակ ճշմարիտ եկեղեցին կախում չունի ձեւերէ, արարողութիւններէ, մայր եկեղեցիներէ, եկեղեցիներէ, մատուռներէ, թեմերէ, նաւակատիքներէ, դրամէ, թագաւորներէ, կառավարութենէ եւ կամ մարդոց կողմանէ համակրութեան ոեւէ գործէ: Անիկա յաճախ շարունակեց իր գոյութիւնը երբ վերոյիշեալ բոլոր բաները իրմէ առնուեցան: Ան շատ անգամ անապատը կամ երկրին քարանձաւները վռնտուեցաւ, անոնց կողմանէ՝ որոնք պարտ էին իր բարեկամները ըլլալ: Անոր գոյութիւնը ոեւէ բանէ կախում չունի, միայն Քրիստոսի ներկայութիւնէն եւ Անոր Հոգիէն: Եւ ասոնք (Քրիստոս եւ իր Հոգին) միշտ իր հետը ըլլալուն համար չկրնար մեռնիլ:

Միակ ճշմարիտ եկեղեցին այն է, որուն կը պատկանին պատուանունները եւ խոստումները, պատիւը, առանձնաշնորհումները, ներկայ եւ ապագայ փառքը: Այս եկեղեցին Քրիստոսի մարմինն է, Քրիստոսի հետ է ան, Աստուծոյ ընտանիքն է ան, Աստուծոյ շէնքն է Իրմով հիմնուած, Ս. Հոգւոյն տաճարն է: Անդրանիկներու եկեղեցին է, թագաւորական քահանայութիւնն է, զընով ստացուած ժողովուրդն է, զատուած, փրկուած, Աստուծոյ բնակարանն է ան, աշխարհի լոյսը, երկրին աղը: Առաքեալներու հաւատոյ հանգանակին ճշմարիտ «Կաթողիկէ Սբ. Եկեղեցին» է ան...: Այն եկեղեցին է որուն Յիսուս խոստա-

ցաւ ըսելով թէ «Դժոխքին դռները զանիկա պիտի չյաղթեն» եւ որուն ըսաւ, «ամէն օր ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի վերջը» Մատթ. ԺԶ. 18 եւ ԻԸ. 20:

Միակ ճշմարիտ եկեղեցին այն է, որ ունի ճշմարիտ միութիւնը: Անոր անդամները կատարելապէս կը համաձայնին կրօնական ամէն նիւթի շուրջ, որովհետեւ միեւնոյն Հոգիէն կը սորվին: Աստուծոյ, Քրիստոսի, Սբ. Հոգւոյն, մեղքի, հաւատքի, ապաշխարութեան, որբութեան հարկաւորութեան, Սբ. Գրքին արժէքին, աղօթքի կարեւորութեան, յարութեան, զալիք դատաստանին, ասոնց վերաբերեալ բաներուն մէջ նոյն համոզումը ունին: Առէք անոնցմէ երեքը կամ չորսը իրարու անձանցով, աշխարհի ամենահոռու մասերէն, քննեցէք զանոնք զատ զատ այս կէտերուն վրայ, զանոնք բոլորը համաձայն կը գտնէք:

Միակ ճշմարիտ եկեղեցին այն է որ ճշմարիտ սրբութիւնը ունի: Անոր անդամները սուրբ են, ոչ թէ միայն սուրբ են դաւանանքով, անունով, հապա սուրբ են իրենց խորհրդով, սուրբ են իրենց գործերուն մէջ եւ իրենց կեանքի ամենամանր մասերուն մէջ: Անոնք քիչ թէ շատ Քրիստոսի պատկերին կը նմանին: Ոեւէ անմաքուր այս եկեղեցիին չպատկանիր:

Միակ ճշմարիտ եկեղեցին այն է որ իրականապէս կաթողիկէ (ընդհանրական) է: Ազգի մը կամ ժողովուրդի մը եկեղեցին չէ ան, անոր անդամները կը գտնուին աշխարհի ամէն մասերուն վրայ ուր Աւետարանը ընդունուած եւ հաւատացուած է: Անիկա երկրի մը ռահմանապետութիւնն է մէջ փակուած չէ, անիկա առանձնական ձեւերու զոգին մէջ շնչահեղձ չըլլար, ոչ ալ արտաքին կառավարութեան իշխանութեան տակ: Իր ծոցին մէջ հրեային եւ յոսիին, սելին կամ ճերմակին, եպիսկոպոսականին կամ երիցականին կամ մկրտչականին կամ մեթոնականին մէջտեղ խտրութիւն չկայ, հապա Յիսուսին վրայ եղած հաւատքն է բոլորը: Անոր անդամները կը հաւաքուին հիւսիսէն, հարաւէն, արեւելքէն, արեւմուտքէն, բոլոր անուններէն ու բոլոր լեզուներէն, բայց բոլորը «մէկ» պիտի ըլլան Քրիստոսի մէջ:

Միակ ճշմարիտ եկեղեցին այն է որ իրականապէս առաքելական է: Ան կը բարձրանայ Առաքեալներու դրած հիման վրայ եւ պահած է անոնց քարոզած վարդապետութիւնները: Երկու մեծ նպատակները զորս իր անդամները կը հետապնդեն՝ առաքելական հաւատքն է եւ առաք-

քելական սկզբունքներու գործադրութիւնն է:

Միակ ճշմարիտ եկեղեցին այն է որ վստահ է թէ պիտի յարատեւէ մինչեւ վերջը: Բան մը չի կրնար զայն տապալել կամ կործանել: Անոր անդամները կրնան հալածուիլ, ճնշուիլ, ատեանի մատնուիլ, ծեծուիլ, գլխատուիլ կամ այրուիլ, ան երբեք չոչնչանար, ան իր վիշտերէն կը վերականգնի, անիկա հուրի եւ ջուրի մէջէն կ'աւարի: Երբ մէկ կողմէն արգիլուի, միւս կողմէն կը հոսի: Հերովդէսներ, Ներոններ, արիւնարբու հալածիչներ պարապ տեղը աշխատեցան զայն կործանելու. անոնք իրենց հազարաւորները սպաննեցին եւ յետոյ իրենք ալ իրենց կարգին մեռան: Սալ մըն է ան որ շատ մուրճեր մաշեցուց այս երկրին մէջ եւ տակաւին շատե՛ր պիտի մաշեցնէ, մորենի՛ մըն է ան որ կը վառի յաճախ, բայց երբե՛ք չսպառի:

Ճշմարիտ եկեղեցին այն է որ Բրիստոսի գործը կը կատարէ երկրի վրայ: Իր անդամները պզտիկ հօտ մը կը կազմեն, թուով շատ փոքր, բաղդատմամբ աշխարհի որդւոցը հետ, մէկ կամ երկու հոս, երեք կամ չորս հոս, մի քանի հատ համայնքի մը մէջ, մի քանի հատ ուրիշի մը, բայց ասոնք են որ կրնան զողացնել տիեզերքը, ասոնք են որ կը փոխեն ազգերուն ճակատագիրները իրենց ազօթքներով, ասոնք են որ մաքուր, անարատ կրօնքին ծաւալման գործունեայ աշխատաւորներն են, ասոնք երկրի մը կեանքն են, վահանը, պաշտպանութիւնը, յենարանը եւ նեցուկը այն ազգին որուն կը պատկանին:

Ճշմարիտ եկեղեցին է միայն որ պիտի ժառանգէ փառքը, երբ Յիսուս Քրիստոս յայտնուի, քրք աշխարհային փառքերը անցնին, ան, Հայր Աստուծոյ աթոռին առջեւ պիտի ներկայացուի առանց արատի: Գահեր, իշխանութիւններ եւ զօրութիւններ երկրի վրայ պիտի ոչնչանան... Բայց անդրանիկներու եկեղեցին «պիտի փայլի յաւիտեանս յաւիտենից»: Երբ փրկուածները բոլորը պատրաստ ըլլան, երբ Աստուծոյ որդւոցը յայտնուիլը տեղի ունենայ, ոչ երիցականութիւնը, ոչ ժողովականութիւնը եւ ոչ ալ ուրիշ մարդկային անուն մը պիտի յիշուի, մէկ հատ միայն պիտի կանչուի, «Ընտրեալներու եկեղեցին», Քրիստոսի եկեղեցին»:

Լաւ ուշադրութեան առէք, կրնաք հաւատարմ եպիսկոպոսական մը ըլլալ, կամ երիցական կամ անկախ, կամ մեթոտական... կամ մկրտչական եւ սակայն ճշմարիտ եկեղեցիին չպատկանիլ... եւ Ձեզի աւելի լաւ պիտի ըլլար եթէ «երբեք ծնած չըլլայիք»:

«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մարդ մը նորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել» (Յովհ. Գ. 3):

Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան Իր անուանը» (Յովհ. Ա. 12):
Թարգ. Մ. Վէճիլեան

ՍՈՒՐԲ ՕԳՈՍԻՆՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳԻՐՔ Ժ. ԳԼՈՒԽ ԽԲ

Ամբարտաւաններուն մոլորութիւնը որոնք ինկած հրեշտակներուն կը դիմեն՝ իբր միջնորդ Աստուծոյ եւ մարդոց միջեւ (1)

Ո՞վ գտնել որ կարող ըլլայ զիս Բեզի հետ հաշտեցնելու: Հրեշտակներէ՞ն խնդրելու եմ, եւ ի՞նչ ազօթքներով. ի՞նչ զոհերու միջոցաւ: Հսեցի թէ շատեր կ'աշխատին Բեզի գալ, եւ անձնապէս չկարենալով, այս ճամբան փորձեցին եւ շուտով տարօրինակ տենչանքի մը մէջ ինկան — տեսնելու արտառոց տեսիլքներ — ու արժանացան յուսախաբութեան: Ամբարտաւան՝ զքեզ կը փնտռէին, դիտութեան բոլոր պերճանքովը, սրտերնին հպարտ եւ ո՛չ տրտմած: Հոգւոց նմանութիւնը, իրենց հպարտութեանը իբր մեղաւիկից տուաւ օգին իշխանութիւնները, անոնց (մարդոց) վսեմութիւնն: ու դիրքը զիրենք մոլորեցուց երբ իրենց հոգիներուն բժիշկը, Միջնորդը կը փնտռէին, առանց գտնելու, քանզի իրենց առջեւ ունէին միայն «Սատանան լուսեղէն հրեշտակի կերպարանքով»:

Ամբարտաւան մարմինն, ինչ որ զքեզ հրապուրեց, այս էր որ հրապուրողը մարմինով չէր հագուած: Մեղաւոր եւ մահկանացո՛ւ մարդիկ: Բայց Դուն Տէ՛ր, որուն խաղաղութիւնը հպարտութեամբ կը փնտռեն, Դուն անկախ եւ մահէն եւ մեղքէն:

.....

(1) Տե՛ս Կողոսց. Բ. 18: Կրնայ ակնարկուիլ նաեւ կարգ մը դիւային պաշտամանց, ուր կը ծաղկուի յիմարութիւնը անոնց՝ որք կը խորհին խաւարի իշխանութեամբ լուսոյ Թագաւորութեանը հասնիլ: Յայտնի է որ զարհուրելի սըխալ մըն է, շիտակ ճամբան ըլլալով Կողոսց. Ա. 12, 14

Ձ. Բ. Պ.

Արդ, հարկ էր որ Աստուծոյ եւ մարդոց միջեւի Միջնորդը նմանութիւն մը ունենար Աստուծոյ եւ նմանութիւն մը մարդոց: Բոլորովին նման մարդոց, Աստուծոյ հետի պիտի ըլլար, բոլորովին նման Աստուծոյ, մարդոցմէ հետի պիտի ըլլար, ալ միջնորդ մը չէր: Այսպէս այս կեղծ միջնորդը — որուն Քու գաղտնի արդարութիւնը թոյլ կուտայ որ հրապուրէ հպարտութիւնը — մարդուն հետ հասարակաց բան մը ունի, մեղքը: Իսկ Աստուծոյ հետ ալ հասարակաց բան մը ունենալ ցոյց կուտայ, ազատ՝ ժամնաւոր հանդերձէն եւ մահկանացութենէ, ինքզինքն իբր անմահ կ'անցնէ: Սակայն քանի որ »մեղքին վարձքը մահ է«, մեղքին հազորդակցութենէն կ'անցնի մահուան հազորդակցութեան:

ԳԼՈՒԽ ԽԳ.

Յետոյ քրիստոս միակ Միջնորդը

Բայց ճշմարտութեան Միջնորդը, զՈր Քու որոնմանութեանդ գաղտնիքը ճանչցուց խոնարհներուն, եւ զոր զրկեցիր անոնց ուսուցանելու Իր օրինակովը, նոյնինքն խոնարհութիւնը, Աստուծոյ եւ մարդոց այս Միջնորդը Յետոյ քրիստոս մարդը երեւցաւ մահկանացու մեղաւորներուն եւ անմահ Արդարին միջեւ: Մահկանացու՝ մարդոց հետ, արդար՝ Աստուծոյ հետ: Եւ քանի որ կեանքն ու խաղաղութիւնը արդարութեան վարձքն են, այն արդարութեամբ որ գինքն Աստուծոյ կը միացնէր, եկաւ արդարացուած ամբարիշտներուն մէջ փճացնելու մահը, որուն ուզեց Ինքն ալ հարկատու ըլլալ մարդոց նման: Ան էր որ հեռուէն հին սուրբերուն ցոյց տրուեցաւ որպէսզի կարենալին փրկուիլ Իր Թափելիք արեան վրայ եղած հաւատքով, ինչպէս մենք կը փրկուինք Իր Թափած արեան հաւատալով: Վասնզի միայն Իր Մարդ ըլլալու յատկանիշովն է որ Միջնորդ է: Իբր Բան ալ միջին դիրք մը չունի, Աստուծոյ հաւատարմ է, «Աստուծոյ Աստուծոյ մէջ եւ Սուրբ Հոգիով մէկ միակ Աստուծոյ»:

Ո՛վ անհունօրէն միակ բարի՝ Հայր, մեզ ի՛նչ սիրով սիրեցիր: Քու Միածին Որդիդ ալ չես խնայեր: Մեզի մեղաւորներուս համար կը մատենա զԱյն, ուրեմն մեզ ի՛նչ սիրով սիրեցիր: Ան որ «յափշտակելու բան չսեպեց Աստուծոյ հաւատարմ ըլլալը, մինչեւ մահուան հնազանդ եղաւ» մեզի համար: Ան, միակ ազատը մեռելներուն մէջ, որ «իշխանութիւն ունէր դնելու Իր կեանքը եւ զայն նորէն առնելու» մեզի համար Քու ա-

նունովդ յաղթող եւ զոհ եղաւ, եւ յաղթող՝ որովհետեւ զոհ է: Մեղքի համար քու անունովդ քահանայ եւ պատարագ, եւ քահանայ՝ վասնզի պատարագ ալ է: Ան որ մեզ գերիներս Քեզի գաւակ կ'ընէ, վասնզի Քու Որդիդ է եւ մեր սիրոյն եղաւ գերի: Ո՛հ, արդարացիօրէն է որ Իր վրայ դրուած է այս հաստատ համոզումը թէ «Դուն կը բժշկես իմ բոլոր հիւանդութիւններս»: Անո՛վ որ Քու աջդ նստած է եւ որ անդադար կը բարեխօսէ մեզի համար, եթէ ոչ անյուսութեան մէջ պիտի իյնայի, քանզի շատ եւ մեծ են իմ տկարութիւններս, բայց աւելի մեծ է Քու դարմանիդ զօրութիւնը:

Մենք կրնայինք Քու Բանդ մարդոց հետ ուխտի մոտենլէն շատ հեռու կարծել եւ յուսահատիլ մեզմէ, եթէ մարմին չառնէր եւ չընակէր մեր մէջ: Կքած՝ իմ մեղացս սարսափներուն եւ թշուառութեան ծանրութեան տակ, սրտիս մէջ մըտածած եւ գրեթէ որոշած էի անապատ փախչիլ, սակայն Դուն արգիլեցիր զիս, վստահութիւն ներշնչելով այս խօսքովդ՝ «Քրիստոս բոլորին համար մեռաւ. որպէսզի անոնք որ կ'ապրին ալ չապրին իրենց համար, բայց Անոր որ մեռաւ իրենց համար»:

Հաւ ուրեմն Տէր, իմ բոլոր հոգերս Քու կուրծքիդ վրայ կը նետեմ ապրելու եւ Քու օրէնքէդ հրաշքներ վայելելու: Դուն գիտես իմ տգիտութիւնս եւ տկարութիւնս, սորվեցուր ինծի, բժշկէ զիս: Այս Մեռածին սրտէն՝ որուն մէջ պահուած են իմաստութեան եւ գիտութեան բոլոր գանձերը, Իր արիւնովը գնեց զիս: Հեռու ինծմէ ամբարտաւանաց ամբարտաւանութիւնները: Կը խորհիմ իմ փրկագինիս վրայ, կ'ուտեմ զայն, կը խմեմ զայն եւ կը տարածեմ: Դեռ աղքատ՝ կը տենչամ լեցուիլ անոնց հետ որ զայն կ'ուտեն եւ անկէ կը կշտանան, որք կ'օրհնեն Տէրը վասնզի կը փնտոեն զԱյն:

ԳԻՐԲ ԺԱ. ԳԼՈՒԽ ԽԺ.

Բանը կը խօսի մեր սրտին

Այս սկզբունքով է որ ո՛վ Աստուծոյ, Դուն ըստեղծեցիր երկիրն ու երկինքը, Քու «Բան»իդ մէջ, Որդւոյդ, զօրութեանդ, իմաստութեանդ եւ ճշմարտութեանդ, խօսքով մը, հիանալի գործողութեամբ մը: Ո՛վ պիտի կրնայ հասկնալ այդ հրաշալիքը, ո՛վ պիտի կրնայ պատմել զայն: Ի՛նչ է այս լոյսը որ ընդհատումներով զիս կը լոսաւորէ եւ կը զարնէ սրտիս, առանց զայն վերաւո՞

րելու, կը զարնէ սարսափի սառոյցին եւ սիրով կը բոցավառէ: Վախ կայ այնքան որքան որ հեռու ըլլամ, սէր, այնքան որ աւելի մօտ ըլլամ իրեն:

Իմաստութիւնն է, նոյն ինքն իմաստութիւնը, որուն ճառագայթը ընդհատաբար կը պատռէ հոգւոյս ամպերը, հոգւոյս՝ որ յաճախ անհաւատարիմ այս լոյսին՝ վերստին կ'իյնայ իր խաւարին մէջ, իր տառապանքի բեռն տակ: Քանզի իմ տառապանքս սպառեց ուժերս, նոյնիսկ անկարող եմ կրելու իմ երջանկութիւնս մինչեւ որ Տէր, Քու գթութիւնդ, որ կ'ազատէ զիս իմ անօրէնութիւններէս, չբժշկէ իմ բոլոր հիւանդութիւններս: Բայց Դուն իմ անձն ապականութենէ կը փրկես, ողորմութիւնով ու գթութիւնով կը պսակես զիս, Քու բարութիւնովդ կը լեցնես իմ բոլոր փափաքներս, եւ իմ երիտասարդութիւնս արծիւինին պէս կը նորոգուի: Քանզի յոյսը մեր փրկութիւնն է եւ համբերութիւնով կ'սպասենք Քու խոստումներուդ: Ով որ կրնայ թող ինքն իր մէջ լսէ Քու ներքին ձայնդ: Ես կ'աղաղակեմ հաւատալով Քու պատգամիդ, չի՛նչ փառաւոր են Քու գործերդ, Տէր», Քու իմաստութիւնովդ ամէն բան ըրիր: Ան է սկզբունքը, եւ այդ սկզբունքին մէջ Դուն երկիրը եւ երկինքը ստեղծեցիր:

Քաղուածաբար
Ձ. Բ. ՊՈԻՏԱՔԵԱՆ

Փարիզ

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

“ԴՈՒՔ ԷՔ ԻՄ ՎԿԱՆԵՐՍ,,



Քեզ յաւիտենական սիրով սիրեցի, անոր համար ողորմութիւնով քեզ քաշեցի: Երեմ. ԼԱ. 3
Փրկիչն ցուցուց ողորմութիւն
Ինձ մեղաւոր արարածիս.
Ինձի յայտնեց Իր սէրն անհուն
Որ դժոխքէն փրկէ հոգիս:
Այս տեսնելով կ'ուրախանամ,
Ողորմութեան ալ փառք կուտամ:
Դոհութիւն ու փառք կը մատուցանեմ երկնաւոր Հօրը որ զիս՝ «յանցանքներու ու մեղ-

քերու մէջ մեռած արարածս, իր Սուրբ Հոգւոյն անդիմադրելի յանդիմանութեանը մատնեց: Այսպէս անոր ներգործութիւնովը զգաստացած՝ իմ ամբարիշտ եւ մահապարտ ըլլալս ընդունեցի խորունկ զղջումով: Հուսկ ուրեմն նախախնամական միջոցներով առաջնորդուեցայ Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի, որ «աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու, որոնց զուխը ես եմ»:

Հիմա, «հաւատքով արդարած ըլլալով՝ խաղաղութիւն ունիմ Աստուծոյ հետ մեր Տէրօջը Յիսուս Քրիստոսի ձեռքով:

Եթէ Տէրը կամի շուտով յիսնամեայ պիտի ըլլամ: Կեանքիս այս երկար ժամանակաշրջանին մէջ, ոչ մէկ բան այնքան հիացում եւ զմայլանք առթած է ինձի, որքան այն Մեծ Ողորմութիւնը, որով Սուրբ Աստուած հաճեցաւ ինձի պէս պիղծ եւ անարժէք չարագործ մը որդեգրել: Աստուծոյ այս Ողորմութիւնը եւ իմ Փրկիչի խաչելութեան պատմութիւնը զիս այն աստիճան սիրով եւ երախտագիտութեամբ լեցուցած են, որ չեմ յիշեր ոեւէ պարագայ, ուր Տէր Յիսուսը որպէս իմ անձնական Փրկիչս դաւանելու մէջ, պզտիկ ամօթի կամ երկչոտութեան զգացում մը ունենամ: Ընդհակառակը, փրկուելէս ասդին, թէ տան եւ թէ եկեղեցին մէջ, թէ գործաբանին եւ թէ հրապարակի վրայ, թէ հաւատացեալներու եւ թէ անապաշխարներու առջեւ, միշտ ալ պատիւ ու առանձնաշնորհում սեպած եմ վկայել թէ, «Ես առաջ հայհոյիչ էի եւ հալածող ու թշնամանող, բայց ողորմութիւն դտայ...»:

Այս օրերս մեծ փափաք մը ունեցայ զբաւոր վկայութիւնս յանձնել ինձի սիրելի եւ շատ օգտակար եղող «Բանբեր»ի էջերուն: Նպատակս չէ երբեք հին եւ նոր կեանքիս պատմութիւնը յաւերժացնել: Ո՛չ: Մեր Տէրը կ'ըսէ, «Ուրախացէք որ ձեր անունները երկինքը գրուած են» Դուկ. Ժ. 20: «Կենաց գրքին մէջ» Յայտ. ԻԱ. 27: Ըսել է, այդ նախաձեռնարկը Ինք ըրած է արդէն: Փա՛ռք Իրեն: Բայց ես երեք սուրբ շարժառիթներէ մղուած կ'ուզեմ վկայութիւնս հրատարակութեան տալ:

Ա. Գրուած է թէ «Անոնք անոր (Սատանային) յաղթեցին Գառնուկին արիւնովը եւ իրենց վկայութեանը խօսքովը...» Յայտ. ԺԲ. 11: Ես ալ կ'ուզեմ Գառնուկին արիւնովը եւ իմ վկայութեանս խօսքովը թշնամին հրապարակաւ խայտառակել եւ «Յաղթողներու» ցանկը անցնիլ:

Բ. Դարձեալ հրամայուած է մեզի վկայներ ըլլալ «...մինչեւ երկրի ծայրերը...» Գործ. Ա. 8: Առերեւոյթն անիրազործելի այս հրամանը կ'ու-

զեմ իրագործել «Բանբեր»ի միջոցով որ ազատ անցագիր ունի «մինչև երկրի ծայրերը»:

Գ. Բժշկուած Լէգէոնին պէս «անպատմելի ու փառաւորեալ խնդութիւնով» լեցուած, կ'ուզեմ պատմել ամենուն, «ինչ որ Տէրը ինծի ըրաւ եւ ողորմեցաւ» Մարկ. Ե. 19-20: Ո՞վ գիտէ, գուցէ յաջողիմ այս միջոցով Տէրոջը փառքը աւելցընել եւ խեղճ անմահ հոգի մը փրկութեան առաջնորդել:

Ծնած եմ Սեբաստիոյ Ալաքիլիսէ գիւղը, լուսաւորչական ծնողքէ, 1885ին: Հայրս բոլորովին ամբարիշտ մէկն էր: Մայրս ալ թէեւ այդ աստիճանի չէր, եւ աւանդամուլ եկեղեցասէր մըն էր, բայց դարձեալ անէծք, հայհոյանք, ու այս կարգի գարշելի բաներ իրեն բնական բաներ էին: Հետեւաբար մանկութեանս շրջանին ոչ միայն հոգեւոր տարրական կրթութիւն ստացած չեմ, այլ նաեւ շատ վատասեռիչ միջավայրի մէջ ծնած ու մեծցած եմ: Հազիւ 8-10 տարեկան պատանի էի, երբ ծնողքիս ձեռքով թուրքի մը քով Բշակ ըլլալու տրուեցար: Այս պարագան եւս առաւել զիս ապականութեան մէջ խորացուց: Երբ գիտակից տարիքի մէջ մտայ, մահմետական սովորութեան համաձայն զիս թլփատեցին եւ ես օրինաւոր կերպով թրքացայ առանց ունէ խղճահարութեան:

1915ին ռուսերու դէմ ճակատող թրքական բանակին մէջ գտնուելով մոսկովիներու ձեռքը զերի ինկայ ուրիշ բազմաթիւ զինուորակիցներու հետ. 1917ին Զօր. Անդրանիկի մարտակոչին պատասխանելով կամաւոր արձանագրուեցայ եւ թիֆլիզ իջանք կամաւորներու բանակով: Աւելորդ կը սեպեմ յիշել Հայաստանի, Պարսկաստանի եւ ուրիշ սահմանադրութիւններու վրայ մղած մեր հերոսամարտերը, որոնց մէջ Տէրը չը նայելով ծայրայեղ անտառակութիւններու, հրաշալի ողորմութիւններով զիս պահպանած է: Այսպէս, ազատականներս Անդրանիկի առաջնորդութեամբ էջմիածին իջանք, անկէ Ալեքսանդրապոլ եւ հուսկ ուրեմն Կարս եկանք: Երբ զինուորագրութեանս այս շրջանին վրայ յետադարձ ակնարկ մը կը նետեմ, ակամայբէն բերնէս Սաղմոսեբգուին սա խօսքը կը թռչի «Ո՞վ կրնայ միտք առնել իր յանցանքները...» պիտի համբէի բայց զխուս մագերէն աւելի շատ եմ: Եւ իրապէս այդ շրջանին՝ մեղքերուս եւ անօրէնութիւններուս գաւաթը կը յորդէր: Տէրը կրնար իմ Հափազանց Հարութիւններուս համար մեռցնել զիս «առանց ողորմութեան» ինչպէս էրին ըրաւ Ծնդ. ԼԸ. 7: Բայց ո՛չ, «Անիկա իմ մեղքերուս համե-

մատ չըրաւ ինծի...» Սաղ. ՃԳ. 10, Իր ողորմութիւնը եւ ներողամտութիւնը որքա՛ն մեծ ըլլալու են: Կ'ամչնամ ըսելու թէ խաբեւայութիւնս ու հայհոյանքը, աւաղակութիւնս ու կողոպուտը, զինովութիւններս ու ամենագեղիս խայտառակութիւնները ոչ միայն չէին խղճահարեր այլ մանաւանդ հաճոյք կը պատճառէին ինծի: Աւելի ծանր ու սեւ մեղքերով լեցուն է ոճիրներուս եւ շնութիւններուս ցանկը, որոնք «Բանբեր»ի պէս հոգեւոր թերթի մը սուրբ էջերուն վրայ երեւնալն իսկ անվայել կը սեպեմ: Ասով հանդերձ չեմ կրնար չյիշել այդ շրջանին զործած ծանր մեղքերէս մին՝ որուն յիշատակը յաճախ սիրտս ամօթի ու տրտմութեան զգացումներով կը լեցնէ: Ահաւասիկ— 1921ին Կարսի մէջ զեռ էրիկը ողջ կնոջ մը հետ ապօրինի ամուսնութեամբ տարի մը կենակցելէ ու զաւակ մը ունենալէ վերջ, թուրք անունով եւ թրքական տարագով ծպտեալ Անատօլու փախայ, այս մեղքիս ծանր հետեւանքէն խուսափելու համար: Անկէ ալ ջանացի Պօլիս անցնիլ հօրեղբօրս եւ ուրիշ ազգականներուս միանալու փափաքով:

Պօլիս ժամանելէս քիչ ժամանակ վերջ, օրինաւորապէս ամուսնանալ ուզելով, պաակադրութեան համար Առաջնորդարան զիմեցի, բայց զըրամական ծանր պահանջքի պատճառաւ մերժեցի քահանայի ձեռքով պսակուիլ: Այս դէպքը յայտնապէս Տէրոյմէ եղաւ, վասնզի Աստուած ծրագրած էր զիս մեր սիրելի հանգուցեալ Դէորդ եղբայր Երէցեանի ձեռքով «Պայպլը Հաւուզ» առաջնորդել եւ հոն ինծի Իր Որդւոյն փառաւոր Աւետարանը լսել տալ: Արդարեւ «Աստուած մարդուն հոգին Հառներ, հապա միջոցներ կը հնարէ որպէսզի աքսորուածը Իրմէ աքսորուած չմնայ» Բ. Թադ. ԺԳ. 14: Պաակադրութիւնը բողոքականաց եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ: Այդ օրհնեալ պաշտամունքին մէջ լսածներս եւ տեսածներս ինծի համար բոլորովին նոր եւ հրաշալի բաներ էին: Իմ ըմբռնումովս հարսանիք մը խմբով, խաղալով եւ կոռուելով կ'ըլլար, մինչդեռ հոգ առաջին անգամ ըլլալով կեանքիս մէջ հոգեւոր երգեր, հասկնալի աղօթք եւ Աստուծոյ խօսքին պարզ ընթերցանութիւնը կը լսէի: Առաջին անգամն էր որ Յիսուսի մեղաւորաց բարեկամը ու Փրկիչը եւ փրկուածներուն փառաւորեալ թագաւորը եւ Փեսան ըլլալուն շուրջ այդքան պարզ եւ թափանցող քարոզութեան մը կը ունկնդրէի: Թէեւ այն ժամանակ շատ տգէտ էի այդ բոլորը լման հասկնալու համար, բայց այդ պահը իր օրհնեալ եւ սուրբ հակասութիւններով

այնքան խորունկ ազդեցութիւն ըրին վրաս որ ներքնապէս ինքզինքս գրաւուած կ'զգայի արդէն: Յետ արնու ստէպ ժողովներու կը յաճախէի եւ Գէորգ եղբոր հետ հոգեւոր խնդիրներու շուրջ կը խօսակցէինք: Ան ալ թէեւ ինծի պէս անզրապէտ եւ անուս էր, բայց իր բոլոր կարելին կ'ընէր իր պատիկ լուսովը զիս Տէրովը առաջնորդելու:

1924ին կնոջս եւ ուրիշ ազգականներու հետ Յրանսա մեկնեցայ: Գէորգ եղբայրն ալ մեզի հետեւեցաւ: Թէպէտ միտքս բոլորովին հոգեւոր խորհուրդներով լեցուած էր, բայց սիրտս խաղաղութիւն չունէր: Պօլսոյ մէջ ընդունած լոյսէս յառաջ եկած մակերեսային ուրախութիւնը կորսնցուցած էի: Որքան աւելի լուսաւորուէի, այնքան աւելի մեծ մեղաւոր մը ըլլալս կը տեսնէի: Սուրբ Հոգին անդադար կը գործէր ներսիդիս: Գիշեր ու ցորեկ իմ ամբողջ ուշադրութիւնս Աստուծոյ սրբութեան եւ իմ գարշելի ու տխուր վիճակիս վրայ կեդրոնացած էր: Ներքին այս անտանելի վիճակիս մէջ Գէորգ եղբայրը դուայ եւ հարցուցի անոր, «Ի՞նչ պիտի ըլլայ այս վիճակս եղբայր, բայց մարդասպանութեան թողութիւն կ'ըլլայ...»: Ծերունի եղբայրը շատ պարզութեամբ պատասխանեց, «Ծ'օ, միտքդ բեր Ռախաբը և շնութեան մէջ բռնուող կիւնը: Միտքդ բեր խաչին վրայ փրկուող աւազակը: Հապա Սօղո՛ւր, որուն մեղքը քանիք պահադի (պարզ) մարդիկ ալ չէին, այլ Քրիստոսի եկեղեցին կը հալածէր եւ Աստուծոյ սուրբերը կ'սպաննէր: Ասոնց բոլորին մեղքերը ներուած չե՞ն որ քու մեղքերդ ալ չներուին: Աստուած մարդու աշառութիւն չընէր» «Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ»:

Ո՛հ, որքան պարզ եւ զօրաւոր էին այդ միամիտ ձերբունիին խօսքերը, որ Աստուծոյ սիրոյն եւ Քրիստոսի արեան գօրութեան վրայ անմիջական հաւատք ստեղծուեցաւ մէջս: Նոյն վայրի եանին գզացի որ կոնակէս բոլոր մեղքերուս բեռը վար ինկաւ: Հաւատացի որ Տէրը բոլոր անօրէնութիւններուս հետ ներած է նաեւ բոլոր շնութիւններուս եւ մարդասպանութեանս: Ո՛հ, ի՞նչ օրհնեալ էր այդ պահը, երբ Տէրը հաճեցաւ պարզ եղբոր մը միջոցով փրկութեան դռնէն մտնել զիս «գիտութեան գերազանց» Քրիստոսի սէրը և ամէն միտքէ վեր եղող Աստուծոյ խաղաղութիւնը» վայելելու համար: Յիսուսի այդ վայրկեանին «ամէն բաները նոր եղան»: Փա՛ռք Յիսուսի:

Այս օրերուն մէջ յոյն քահանայի մը այգիին մէջ կ'աշխատէի, իր հօրը հակողութեան տակ: Շաբաթ իրիկուն մը առաջարկեց ինծի որ կիրա-

կի ալ գործի գամ: Ձեմ կրնար, պատասխանեցի իրեն: Ձե՞ս կրնար, հարցուց, բայց ինչո՞ւ: Որովհետեւ Աստուծոյ սուրբ օրն է, ըսի իրեն: «Պիզիմ պէօյիւք փափազ իզին վերիօր» աւելցուց: Այդ պարագային զրպանէս Աւետարանս հանելով «Պուտըր պէնիմ պէօյիւք փափազ» ըսի իրեն, «պուզուտս փափազ իզին վերմէզ»: Բայց մէկ կիրակի մը աշխատիլը փնաս չունի, շարունակեց զիս համոզելով, մանաւանդ երբ գործը խիստ ստիպողական է եւ օրովարձքդ ալ կրկնապատիկ...: Ինչ կ'ուզէ թող ըլլայ, եթէ ամբողջ աշխարհ ալ տալու ըլլաս, կիրակի օրը մէկ ժամ իսկ չեմ աշխատիր: Լա՛ւ ուրեմն, վճուեց, երկուշաբթի ալ գործի մի գար: Շնորհակալ եմ պատասխանեցի իրեն խաղաղութեամբ եւ բարեւելով հեռացար: Հետեւեալ օրը, կիրակի առաւօտուն կանուխ մեր տունը եկաւ զիս գործի կանչելու: Հօրեղբայրս ալ քովս էր: Երբ հակառակ իրենց համոզիչ խօսքերուն, սուրբ օրը աշխատելու առաջարկին մերժեցի, սկսան երկուքն ալ զիս ծաղրել եւ վրաս խնդալ: Կը յիշեմ, ի պատասխան իրենց ծաղրանքներուն, բացի Աւետարանս եւ իրենց կարդացի Հոով. Լ. 28-39 համարները: Այն ատեն մարդը բարկութեամբ մեզ ձգեց զնաց: Իրաւ այս քայլս ինծի շատ սուղի նստաւ ու ես գործս կորսնցուցի, բայց փառք Աստուծոյ «Իր խօսքը ամուր աշտարակ է», որուն դիմողը ապահովութիւն կ'ունենայ: Ես ալ Մատթ. 2. 19-34 համարներուն կոթնելով ուրախութեամբ այդ քայլը առի, մանաւանդ սա մէկ խօսքը զիս վրատահութեամբ եւ ուրախութեամբ կը լեցնէր «... Որչա՛փ աւելի ձեզ թերահաւատներ»: Տէրը զիտէր թէ կնոջմովս եւ զաւակներովս մէկտեղ ծայրայեղ թշուառութեան մէջ կը գտնուէինք և թէ այդ քալը իր փառքին համար առի: Այսքանը կը բաւէր: Հազիւ քանի մը օր անցած էր, հակառակ գործի սակաւութեան, Տէրը զիս աւելի շահաւէտ գործի մը առաջնորդեց: Տէրը հաւատարիմ է, երանի՛ անոնց որ փորձուելով ընտիր կը գտնուին: Յակ. Ա. 12:

Թէպէտ խաղաղութիւնս կատարեալ էր և փրկութեանս վստահութիւնը «Սիօն լեռանը պէս որ չսասանիր», բայց դեռ լուսաւորուած չէի հոգեւոր կեանքի մանրամասնութիւններու շուրջ և բոլոր ազատութիւնով կը ծխէի: Օր մը թրքախօս եղբայր մը ինծի հանդիպեցաւ մինչ ես կը ծխէի: Շատ լրջութեամբ եւ քաղցր կերպով հարցուց, «Սամուէլ եղբայր, Յիսուս կը ծխէ՞ր»: Հասկըցայ թէ ինչ ըսել կ'ուզէր եղբայրը: Անմիջապէս սեկարս նետեցի գետին եւ կոխկոտեցի: Ես

լման գերի էի խմելու եւ ծխելու ունակութիւններուս: Այդ օրէն վերջակէտ դրի այդ զոյգ մոլութիւններուս՝ Տէրոջ օգնութեամբը: Գրուած է թէ «Եթէ Ուրդին ձեզ ազատ ընէ, ճշմարտապէս ազատ պիտի ըլլաք» Յովհ. Ը. 36: Իրապէս ալ այն օրէն ի վեր խմելու եւ ծխելու փափաքս իսկ արմատախիլ եղած էր սրտէս: Փառք Անոր Զօրութեան:

Լուսաւորութիւն եւ զարգանալու փափաքս այնքան մեծ էր որ, հակառակ անձուկ պարագաներուս, ծախս կ'ընէի եւ Մինչեւ Մարտէյլ կ'իջնէի Աստուծոյ խօսքը լսելու համար. Սաղ. ԽԲ. 4: Կարծես Տէրը այս մեծ փափաքս լիցնելու համար զիս ընտանեօք Սէնթ Օպան ղրկեց: Անպատմելի եղաւ ուրախութիւնս երբ հոն քանի մը եղբայրներ գտայ որոնց հետ տուները կը հաւաքուէինք ազօթքի եւ սերտողութեան: Այդ ժողովներէն մեծապէս օրհնուեցայ եւ լուսաւորուեցայ:

1928ին եղբայրներով եւ հայրենակիցներով նորէն Լա Սիօթա վերադարձանք: Հոն քանի մը նոր Աստուծոյ զաւակներ գտանք որոնց հետ միանալով եկեղեցին կազմեցինք: Հազիւ իրարու քով եկած էինք, երբ բանասրկուն սնտոի պատճառներով մեր մէջ զժտութեան եւ պառակտումի որոմը ցանեց: Այս քանդիչ զէպքը շատ սուղի նստաւ Աստուծոյ գործին վրայ: Բայց գոհութիւն Աստուծոյ որ մեր անխառն հառաջանքներուն պատասխանելով Իր գործին այցելութիւն ըրաւ եւ մեզի պաշտօնեայ մը ղրկեց: Ներկայիս խաղաղութեամբ եւ միաբանութեամբ վերախմբուած Աստուծոյ զաւակներուն հետ մէկտեղ Տէր Յիսուսի թագաւորութեանը յառաջացման համար կ'ապրինք ու կը գործենք մինչեւ որ Ինք գայ:

Տէրոջ աւելի գոհութիւն տալու պարտական եմ իմ տանս ըրած օրհնեալ այցելութեան համար: Ընտանիքիս իւրաքանչիւր անդամին դարձը սրտիս ամենամեծ փափաքը եւ ազօթքներուս շարունակական նիւթն էր: Տէրը լսեց եւ պատասխանեց: Ոչ միայն զաւակներս, այլ նաեւ հոգեւոր խնդիրներու խիստ հակառակող կիսն ալ ճշմարիտ ապաշխարութեամբ եւ կատարեալ նշխիրով Տէր Յիսուսի յանձնուեցան: Այլ հիմա անհուն շնորհակալութեամբ եւ ինդութիւնով կրնամ ազադակել Յեսուի պէս, «Ես եւ իմ տունս Եհովան պիտի պաշտենք»:

«Այլ գոհութիւն Աստուծոյ Անոր անպատմելի պարգեւին համար» Բ. Կոր. Թ. 15:

Լա Սիօթա ՍԱՄՈՒԷԼ ԾԱՌՈՒԿԵԱՆ

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՅԻՍՈՒՍ ԱՄԵՆՈՒՆ ՏԵՐԸ

Յիսուս Քրիստոս ունի շատ մը տիտղոսներ, որոնք Իրեն տրուած են Ս. Գրութեան մէջ: Ամէն մարդ զիտէ թէ նա աշխարհի Փրկիչն է: Բայց Պետրոս առաքեալ Գ. Առաք. գրքին մէջ կը յայտարարէ բազմութեանը, «Աստուած զԱնիկա Տէր ալ ըրաւ, Օծեալ ալ, այն Յիսուսը զոր դուք խաչեցիք» (Գ. Առաք. Բ. 36):

Աղէկ հասկնանք ամբողջ վեհութիւնը, մեծափայլչութիւնը եւ իշխանութիւնը այսպիսի տիտղոսի մը մէջ պարփակուած: Տէրը իրաւունք ունի մեր ամբողջ յարգանքին ու սիրոյն: Ինչ որ ունինք, Անոր կը պատկանի, մեր կեանքը, մեր սիրտը, մեր ինչքը: Մեր բոլոր վստահութիւնը Անոր կը վերաբերի, եւ մենք կը պարտինք Իր աչքերուն առջեւ հաճոյ երեւցածները ընելու, երկիւղածութեամբ ծառայելով, քանզի նա Տէրն է:

Բայց, պիտի ըսէ մէկը, եթէ Ան ամենուն Տէրն է, ինչո՞ւ համար աշխարհը այսպիսի վիճակի մը մէջ է: Զարը կը տարածուի ու կը յաղթանակէ: Ո՞ր կը տեսնենք այդ Իր գերիշխանութիւնը եւ Իր Տէրութիւնը ներկայ կացութեան մէջ:

Ճիշդ է որ «հիմա ղեռ չենք տեսներ ամէնը Իրեն հնազանդած» (Եբր. Բ. 8): Աչքէ անցնել օտմանակակից աշխարհը եւ հաստատել ներկայ իրականութեանը առջեւ թէ Յիսուս Քրիստոս ամենուն Տէրն է, ասիկա հակասութիւն մը, հերքում մը, զաղտնի բան մը կ'երեւի:

Սակայն երբ իսկապէս խնդրոյն խորը կը թափանցենք, կը տեսնենք որ ներկայ կացութիւնը ոչ թէ հակասութիւնն է, այլ ընդհակառակը բացատրութիւնն է իր իրաւամբ իշխանութեանը: Մենք այն ատեն կը հասկնանք թէ ճիշդ ասոր համար է, վասնզի Իր իշխանութիւնը չէ ճանչցուած, չէ ընդունուած, չէ ուղղուած որ աշխարհը այս տեսակ վիճակի մը մէջ է, եւ այն սարսափելի ընթացքը որ գործերը կը բռնեն, ամենափառաւոր ապացոյցն է թէ աշխարհ կ'ընդդիմանայ Իր Տէրոջ իշխանութեանը:

Մարդիկ կ'ուզեն վարիլ այս աշխարհի բաները իրենց խելքովը, իրենց ընդդիմութիւնը Տէրոջ խորհուրդներուն ընդդէմ պատճառ կ'ըլլայ որ աշխարհ տապալտի այսպիսի հոգեվարքի մը մէջ:

Ուրեմն լսէ Աստուծոյ պատգամը, ընդունէ եւ խոնարհէ Անոր առջեւ որուն համար ըսուած է թէ, Աստուած ալ զԱնիկա խիստ բարձրացուց, ու Անոր Անուն մը տուաւ որ ամէն անունէ վեր է, որպէսզի Յիսուսի անունին ամէն ծովի ծով, երկնաւորներուն ու երկրաւորներուն ու սանդարամետականներուն» (Փիլ. Բ. 9, 10):

ՅԻՍՈՒՍ ԴՈՒՈՐ ԿԸ ԶԱՐՆԷ

Շատ յաճախ կը լսենք որ մեր դուռը կը զարնեն: Երբեմն ցրուիչին շտապ հարուածն է այդ, երբեմն ալ բարեկամի մը յայտնի հարուածը, եւ քամ մուրացիկի մը:

Տղաք կը ճանչնան իրենց հօրը դրան բաղ-խումին կերպը, ծառաները կը ճանչնան իրենց տիրոջինը: Դրան շատ հարուածներ լսած էք, բացէք նաեւ Անոր դրան հարուածները:

Անո՞րը, կը պատասխանէ ընթերցողը, ի՞նչ բնէ կ'ուզէք:

Ըսել կ'ուզեմ թագաւորաց թագաւորին: Մըտիկ ըրէք, «Ահա ես դուռը կայներ եմ ու կը զարնեմ, եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ...» (Յայտ. Գ. 20): Ան «ը կը զարնէ, Տէր Յիսուս Քրիստոսն է, նոյնը որ խաչուեցաւ ու թաղուեցաւ, բայց որ յարութիւն առած ու փառաւորուած է— Աստուծոյ Որդին: Անիկա է որ կը խնդրէ ձեր սրտին մէջ գալու:

Սքանչելի չէ՞ այս:

Մենք լսեցինք որ Անգլիոյ Ճօրճ Ե. թագաւորը եւ Մարիամ թագուհին երբեմն կը ներկայանան իրենց հպատակներէն ամենէն աղքատին տունը. անոնք այսպէս կուզան օգնութիւն մը բերելու եւ մխիթարական խօսք մը ըսելու:

Երբ դուռը կը զարնեն, կը խորհիք թէ տանը բնակողները վայրկեան մը կ'սպասեն՞ զանոնք: Ո՛չ: Սակայն եթէ զանոնք սպասեն ի տանին կամ մերժէին ներս առնելու, ի՞նչ պիտի պատահէր: Վստահ եմ որ բոլոր դրացիները իրենց ցասումը պիտի յայտնէին, զի այս շատ ամօթալի եւ անարգ վարմունք մը կ'ըլլար այնքան զորովալի ձեռնարկի մը ղէմ եւ այնչափ մեծ պատիւի մը, որ կը տրուէր թագաւորական արքայութեանը կողմէն:

Իսկ մենք ի՞նչ պիտի ըսենք քու մասիդ ան-

դարձ ընթերցող, որչա՛փ յաճախ, շատ յաճախ, շատ անգամներ փառաց Տէրը կը զարնէ քու սրտիդ դուռը ներս մտնելու համար: Բայց դուն զայն կը զոցես խստօրէն Անոր առջեւ:

Ան կը սիրէ քեզ եւ կ'ուզէ մտնել քու սրտիդ եւ կեանքիդ մէջ, դարձնելու համար այս կեանքը խնդափայլ, ուրախ եւ երջանիկ կեանքի մը երկնային լուսով վառուած:

Քեզի համար կարեւոր հարցը այս է, «Կ'ուզե՞ս զԱյն ընդունիլ»: Դուն որ քու սրտիդ եւ կեանքիդ մէջը ընդարձակ տեղ մը յատկացուցած ես աշխարհային բաներու համար, բայց աւա՛ղ ոչ մէկ տեղ, ոչ մէկ անկիւն Յիսուսի համար, Անիկա որ միակ Փրկիչն է համայն մարդկութեան:

Արդ, հարուածները երբեմն կրկնուած են, դուն անշուշտ լսած ես շատ անգամներ: Թերեւս քու կեանքիդ մասնաւոր դէպքերով, հիւանդութիւն մը եկաւ եւ քեզ գլխովար դարձուց եւայլն: Տէրոջը հարուածին ձայնը կուգայ Աւետարանի հանդիսաւոր քարոզով մը, քրիստոնեայ բարեկամի մը խօսակցութիւնով, շատ սիրելի բարեկամի մը, կամ սիրելի մը մահուան լուրջ ազդարարութիւնով: Եւ դեռ ասոնք իր հարուածներէն մի քանիներն են: Քու սրտիդ դուռը դո՞ց է դարձեալ: Այս մի քանի տողերը դոր կը կարդաս այս վայրկեանիս մէջ, կրնան ըլլալ քեզի համար մուրճի վերջին հարուած մը:

Մի՛ ուշանար, ալ երկար ատենէ ընդունելու Փրկիչը: Եթէ ընդունիս զԱյն, քեզ իր հետ երկինքի արքայութեան մէջ պիտի առնէ:

Որքա՛ն մարդիկ, հազարներով, երբ իրենց սրտին դռները ուժգին զարնուեցան, երբեք մըտիկ չըրին, յետոյ ժամանակը անցաւ, այցելուն այլեւս բնաւ պիտի չզարնէ երբ մուրճի վերջին հարուածը զարնուի: Ի՞նչ յաւիտեական զղշում եւ ողբ այն ատեն, ինչքա՛ն խղճի խայթ պիտի ունենան կրելու յաւիտեանս յաւիտենից:

Ո՛հ, սիրելի ընթերցող, բաց Անոր քու սրտիդ դուռը, թող տուր որ Նա ներս մտնէ առանց վայրկեան մ'իսկ սպասելու:

Օր մը պիտի գայ որ վերոյիշեալները պիտի զարնեն ուրիշ դրան մը, փուռ յուսով թէ իրենց թող պիտի տրուի ներս մտնելու, սակայն պիտի լսեն այն ատեն, այն ձայնը զոր շատ յաճախ մերժեցին, եւ որ այս անգամ պիտի ըսէ «Ես ձեզ չեմ ճանչնար ուրիշ էք... մէկդի գացէք ինծմէ բոլոր անիրաւութիւն գործողներ» Դուկ. ԺԳ 27:



ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԵՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՀՈԿՏ. 6.

ԵՍԱՅԻ ԿԸ ՊԱՏԿԵՐԱՅՆԷ ԶԱՐԶԱՐՈՒՈՂ ԾԱՌԱՆ

Դաս Եսայ ԾԳ. 1-12

Կարդալ Յայտն. Ե. 9-14

Հին Կտակարանի մարգարէութեանց մէջ Եսայի այն անձն է որ ամենէն շատ փնտռեց ու քննեց «Թէ երբ կամ ինչպիսի ատեն կ'իմացնէր իրենց մէջ եղած Քրիստոսի հոգին, որ առաջ կը վկայէր Քրիստոսի չարչարութիւնը ու անկէ ետեւ փառաւորութիւնը»: Նա ամենէն յստակ կերպով հռչակեց նաեւ հեթանոսներուն ընդունութիւնը Աստուծոյ թագաւորութեան մէջ: Ինչպէս Պօղոս առաքեալ հեթանոսներուն առաքեալը եղաւ նոր ուխտին մէջ, կարելի է Եսային հեթանոսներուն ըլլալիք շնորհքին մարգարէն կոչել հին ուխտին մէջ: Նա «համարձակեցաւ» ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալ (Հռով. Ժ. 20) ազգայնամոլ հրեայ ազգին յայտարարել թէ Աստուած պիտի զտնուէր զինք փնտռող (հեթանոսներուն) կողմէ իսկ Իսրայէլ անհնազանդ եւ հակառակող ժողովուրդ մը պիտի մնար:

Բայց ինչ որ ամենէն հրաշալիին է Եսայիի քով, անոր Յիսուս Քրիստոսի խաչը ելլելուն յստակ նկարագրութիւնն է (Գաղ. Գ. 1): Յիսուսի շատեր Եսայ. ԾԳ. զլսելը Յրդ Աւետարանը կոչած են: Տէրոջը ծառան կը նոյնանայ Անոր հետ որ է. — Կոյսէ մը ծնած, (Է. 14), Աստուծոյ հաւասար (Թ. 6), Աստուծոյ եօթը հոգիներովը լեցուն (ԺԱ. 2): Արարիչը եւ Իսրայէլի Սուրբը (ԺԷ. 7): Դատաւոր, Օրէնստիր, Թագաւոր Տէրը ԼԳ. 22): Յաւիտենական Աստուածը Եհովա (Խ. 28): Ես. ԽԳ. 15 կ'ամփոփէ մասամբ այս անունները:

Աստուծոյ հոգւոյն ներշնչման առջեւ մասնաւոր հնազանդութեան քայլի մը կը կարօտէր մարգարէն, որպէսզի Իսրայէլի փառքը ըլլալիք եւ վերոյիշեալ անունները կրող Մեծիային համար ԾԳ. զլուխին նման անարգանքի, չարչարանքի եւ դատապարտութեան վճիռ մը ընդունէր ու գայն զրելով իր ազգին ներկայացնէր: Բայց մարգարէն ունեցած էր նաեւ ուրիշ յայտնութիւն մը, այն է (ա) թէ Մեծիան թէեւ անհրապոյր մատաղատունկի մը պէս, բայց «Տէրոջը առջեւ» պիտի բուսնէր (հ. 2), (բ) թէ Անոր

անարգութիւնը, երեսէ ձգուիլը, վիրաւորութիւնը, ծեծութիւնը, մահուան մատնութիւնը միայն մեր մեղքերուն ու մեր անօրէնութիւններուն համար էր, մեր խաղաղութեան համար չաւանդաւ տեղը պատժուեցաւ: (գ) Թէ Տէրը մեր ամենուն անօրէնութիւնը Անոր վրայ դրաւ. Տէրը հաճեցաւ որ զԱնիկա ծեծելով ցաւերու մատնէ. եւ վերջապէս (դ) թէ Անիկա Իր չարչարանքէն յետոյ պիտի վարձատրուէր ու մեծնար:

ՀՈԿՏ. 13.—

ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Դաս Երեմ. Ա. 6-10 ԻԶ. 8-15

Երեմիայի մարգարէութեան 52 զլուխնոց զիրքը զժբախտաբար իր մանրամասնութեան մէջ անտեսուած է հաւասարեցեալներուն շատերէն: Բայց ժամանակ է որ մեր օրերու անհաւատարիմ եկեղեցին ձեռք առնէ այս գիրքը ինչպէս Դանիէլ գայն ձեռք առաւ Բաբելոնի 70 տարուան գերութեան վախճանին: Երեմիայի պաշտօնէութիւնը տեւեց 40 տարի (Ա. 2, 3) որոնց ընթացքին նա սրտի ցաւով եւ արցունքով (Թ. 1) ազգաբարեց ու ազալեց իր յետադարձ ու անհաւատարիմ ազգին Տէրոջը դառնալ (Գ. 12, 14, Գ. 1 եւն.):

Երեմիայի ժամանակակից ժողովուրդը անոր պատգամը մերժեցին եւ մարգարէն չարչարեցին: Իսկ յետագայ սերունդներն ալ թէեւ կ'ըսէին, «Եթէ մեր հայրերուն օրերը ըլլայինք, անոնց հետ մարգարէներուն արեանը մասնակից չէինք ըլլար», բայց փոխանակ այդ մարգարէներուն գիրքերը քննելով անոնցմէ օգտուելու, «անոնց տապանները կը շինէին եւ անոնց գերեզմանները կը զարդարէին», այսպէսով «իրենք իրենց վրայ վկայելով թէ իրենց մարգարէական հայրերուն զաւակներն են» (Մատթ. ԻԳ. 29-31): Զգուշ ըլլանք որ մեր դիրքն ալ Երեմիայի հանդէպ անպէտ, «գերեզման զարդարող», պարապ, անօգուտ ու անպտուղ դիրք մը չըլլայ: Կորսուած մեղաւորներ ապաշխարութեան ու փրկութեան առաջնորդելու փափաքող ամէն հաւատացեալ պարտի կարգալ, սերտել ու սորվիլ նաեւ Երեմիայի մարգարէութիւնը որ ճիշտ է մանաւանդ այս նիւթով:

Երբ Տէրոջը կոչին առջեւ դեռահասակ մարգարէն կը պատասխանէ «Ես խօսիլ չեմ գիտէ... ես մանուկ եմ», Տէրը անոր բերնին կը դպչի ու Իր խօսքերը անոր բերնը կը դնէ (Ա. 6, 9): Ու երբ առաջին տեսիլքին Տէրը կը հարցնէ, «Ով ե-

բեմիա, ի՞նչ կը տեսնես», մարդարէին «նշենիի գաւազան մը» պատասխանին վրայ՝ Տէրը կ'ըսէ, «Աղէկ տեսար» (Ա. 11, 12): Այս յատակ տեսողութիւնը ի յայտ կուգայ ամբողջ գրքին մէջ: Երեմիա յատակ կը տեսնէր (ա) Ժողովուրդին մեղքը, (բ) Աստուծոյ արդար բարկութիւնը եւ (գ) Աստուծոյ սքանչելի սէրը (Երեմ. Բ. 2, 1Ա): Իր պաշտօնէութեան ընթացքին Աստուած ըսաւ, «Թէեւ Մովսէս ու Սամուէլ իմ առջեւ կայնելու ըլլային, այս Ժողովուրդին վրայ հաճութիւն պիտի չունենայի» (ԺԵ. 1): Աստուծոյ կողմէ այս յուսահատական յայտարարութեան կը միանար Ժողովուրդին խուլ ականջը եւ թշնամական դիրքը: Բայց Երեմիա Աստուծոյ իրեն տուած փողը 40 տարի չլռեցուց, «Աստուծոյ բերնին պէս եղաւ» (ԺԵ. 19) ու մարգարէացաւ, «Խլելու ու փլցնելու եւ կորսնցնելու ու աւերելու, նաեւ շինելու ու տնկելու» (Ա. 10):

ՀՈԿՏ. 20.—

ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏԴԱՄԸ

Դաս Երեմ. Է. 1-11, 21-23, Սաղ. 72. 7-13

Ինչ որ ալ ըլլար Երեմիայի իր Ժողովուրդին եւ ուրիշ ազգերու տուած պատգամը, անիկա ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍԲՆ ԷՐ: «Եւ Տէրը Իր ձեռքը երկնցուց ու իմ բերնիս դպաւ, եւ Տէրը ինծի ըսաւ, ահա իմ խօսքերս քու բերանդ դրի» (Ա. 9): Ու Երեմիա կ'ըսէ, «Ես Բու խօսքերդ գտածիս պէս զանոնք կերայ» (ԺԵ. 16): Յետագային երբ Ժողովուրդին ծաղրանքին, նախատինքին ու ահարգանքին առջեւ Երեմիա ըսաւ, «զանիկա (Աստուծոյ խօսքը) չյիշեմ... եւ չխօսիմ», բայց կ'ըսէ «սրտիս մէջ վառած կրակի պէս եղաւ ոսկորներուս մէջ զոցուած, յոգնեցայ զանիկա կըրելէ ու ալ չեմ կրնար» (Ի. 7-9): Ամբողջ գրքին մէջ «Տէր»-ը խօսքը ինծի եղաւ, Տէրը ինծի ըսաւ, կ'ըսէ Տէրը եւն» արտայայտութիւնները մօտ 500 անգամներ կրկնուած են:

Երեմիայի պատգամը կարելի է արտայայտել «դարձէք» բառով: Իսրայէլ իր «փաւքը» (Աստուածը) անօգուտ բանի (կուռքերու) հետ փոխած էր (Բ. 11) եւ Աստուած կ'ըսէ, «Ձեր հայրերը ի՞նչ անիրաւութիւն գտան իմ վրաս որ ինծի հեռացան» (Բ. 5) (տես նաեւ Բ. 13, 17-19, 27-29, 31, 32 եւն): «Միթէ ասկէ ետքը ինծի պիտի չազդակե՞ս, ըսելով, ով Հայր իմ, Դուն ես իմ մանկութեանս առաջնորդը» (Գ. 4): Աստուած այսպէսով կը բողբէ Իր ուխտադրութ, անհաւատարիմ, ապստամբ, ապերախտ եւ ապականած Ժողովուրդին դէմ (Երեմ. Բ. զլուխը մանաւանդ

կը յայանէ այս բողբը): Աստուծոյ այս բողբը ընկերացած է անդադար «դարձէք, դարձէք» հրաւերով (տես Գ. 1, 4, 7, 12, 14, 22: Դ. 1, 14, 2, 8, 16, Է. 1-7, 23 եւն): Այս հրաւերը ընկերացած է խոստումներով (եթէ դառնային) եւ սպառնալիքներով (եթէ մտիկ չընէին): Խոստումները հրաշալի էին թողութեան, առատ սիրոյ, վերահաստատման եւ յաւիտենական խաղաղութեան (Գ. 12-19: Է. 1-7: ԼԱ. եւն): Իսկ սպառնալիքները ահարկու պատիժներ կ'ազդարարէին (Գ. 4-9, 11, 27-31, Ե. 2, եւն): Մարգարէն իր պատգամները երբեմն կ'ընդմիջէր արցունքներով (Գ. 19-21 Թ. 1) եւ երբեմն ալ աղօթքներով (Գ. 22-25: Դ. 10: Է. 16: Ժ. 6, 7, 24: ԺԲ. 1-4: ԺԷ. 12-18 եւն): Այս աղօթքները երբեմն նոյնիսկ պատիժ խնդրող աղօթքներ էին (ԺԱ. 20: ԺԸ. 19-23): Ասիկա զարմանալի թուելու չէ՝ երբ նկատի առնենք թէ Սողոմէ աւելի գէշ եւ անիրաւ դարձած էր Երուսաղէմ (Ե. 1), թէ Երեմիա մէկ կողմէն կը մարգարէանար եւ մէկ կողմէն զինքը կը չարչարէին այն աստիճան որ նա Յորի պէս իր ծնած օրը անիծեց (Ի. 14-18): Այս հալածանքին ու չարչարանքին զխաւոր հեղինակներն էին քահանաները եւ մարգարէները (սուտ) (ԻԶ. 8) որոնց դէմ Աստուած Երեմիայի բերնով շատ խիստ վճիռ կուտար (ԻԳ. եւն):

ՀՈԿՏ. 27.—

ԲԱՆԴԱՍԱՐԻ ԽՆՃՈՅԲԸ

Դաս Դան. Ե. 17-28

Կարդալ Սաղ. Ա.

Բաղդասար թողն էր Նարուզդոնոսորի (Դան. Ե. 2 լուսանցք եւ Երեմ. ԻԷ. 7): Պատմութեան կ'իմանանք թէ մինչ Բաղդասար իբր թագաւորի փոխանորդ (երկրորդ թագաւոր) (տես Դան. Է. 7, 16, 29)) այս խնճոյքը կը սարքէր, իր հայրը, Մարաց Դարեհ թագաւորին դէմ կը պատերազմէր: Ոչինչ այնքան կենդանիօրէն կը պատկերացնէ իր հոգւոյն համար անտարբեր գտնուող եւ քրիստոնեայ անունը կրող մեղաւոր մարդուն վիճակը՝ քան այս մեղի ու զեղի թագաւորը: (Ա) Բաղդասար զիտէր Աստուծոյ դատաստանը իր մեծ հօրը կեանքէն (Կ. 22): Իսկ մեղի համար Եբր. ԺԲ. 1ի վկաներուն բազմութիւնը որքան շատցած է եկեղեցւոյ պատմութեան հաւատքի հերոսներով: Թերեւս քու մեծ հայրդ կամ հայրդ ճշմարիտ հաւատացեալ մէկը եւ դուն Աստուծոյ դատաստանը գիտես: (Բ) Բաղդասար խնճոյք կ'ընէր քաղաքի մը մէջ որ անմիջական վտանգի տակ էր: Իսկ մեղաւորը կ'ապ-

րի ու կը հրճուի աշխարհի մը մէջ որ կրակի զատապարտուած է (Բ. Պետ. Գ. 7), (Գ) Բաղդասար Աստուծոյ տանը սուրբ անօթները կը գործածէր կուռքերու ի սպաս դնելով զանոնք: Մեղաւորը Աստուծոյ իրեն տուած մարմինը, ժամանակը, դրամը եւ յաճախ նաեւ կրօնական առանձնաշնորհումները կը գործածէ Սատանան զոհացնելու եւ զԱստուած անպատուելու: (Դ) Բաղդասար կ'ուսէր ու կը խմէր առանց գիտնալու թէ այդ գիշեր իր հոգին իրմէ պիտի պահանջուէր: Եւ Աստուած նոյն գիշերին մէջ գտնուող մեղաւորին կ'ըսէ «Անմիտ» (Ղուկ. ԺԲ. 20): (Ե) Այս վիճակին եւ այս գիշերին մէջ գտնուող թագաւորին վճիռը կ'ընկերացաւ «Մանէ, մանէ, թեկեղ ու փարսին» — կշիռքով կշռուեցար ու պակաս գտնուեցար: Ահարկու վճիռ, սրուն առջեւ գինով ու գոռոց թագաւորը տակաւին անտարբեր կը մնայ, ինչպէս կը մնան գոռոց եւ աշխարհէ ու մեղքէ գինովցած մեղաւորներ Աստուծոյ ծառաներուն տուած ամենէն անարկու ազդարարութեանց առջեւ: Նմանողութեան զարմանալի կէտ մ'ալ Բաղդասարի Դանիէլի հանդէպ ունեցած ընթացքն է՝ անոր բերնէն իր վճիռը լսելէն յետոյ: Բաղդասար Դանիէլը պատիւներով կ'ողողէ: Որքան յաճախ մեղաւորներ պատուելիի մը բերնէն գիրէնք դատապարտող սարսուղդեցիկ քարոզ մը լսելէն յետոյ պատուելին ամէն տեսակ պատիւներով ու յարգանքներով կ'ողողեն, առանց սակայն իրենք զգաստութեան եւ դարձի գալու:

Վ. Ս.

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿՆ ՈՒ ԲԱՆՏԱՐԿԵԱԼԸ

○○○○○

Ոճրագործ մը, քաղաքին մէկ հրապարակին մէջէն զէպի բանտ կ'առաջնորդուէր երկու ոստիկաններու ձեռքով:

Անոր ձեռքերը ետին կապուած էին, երեսոյթը խոժոռ էր եւ դաժան: Աչքերը որ սովորաբար միշտ գետնին ուղղուած էին, երբեմն կը բարձրանային հետաքրքիր ամբողջին վրայ զայն ընթերցելու եւ ատելութեան ակնարկ մը նետելու համար միայն:

Ճիշդ այն վայրկեանին երբ բանտարկեալը

հրապարակէն դուրս կ'ելլէր ամայի փողոց մը մտնելու համար, իր ակնարկներէն մին ինկաւ փոքրիկ աղջկան մը վրայ, որ իր տան դրան սեւ մին նստած այդ դժբախտը կը դիտէր ախրութեամբ:

Աղջնակը այդ ակնարկին վրայ ա'լ աւելի տխրեցաւ, աչքերէն արցունքներ հոսեցան, եւ մի քանի երկվայրկեան վարանելէ վերջ, վազեց բանտարկեալին ետեւէն:

Երբ անոր հասաւ, «Պարոն բանտարկեալ, ըստ, պարոն բանտարկեալ, ներեցէք ինծի եթէ ձեզ զիտելով ցաւ պատճառեցի ձեզի, ձեզ կը փատահացնեմ որ չուզելով ըրի: Ոչ ալ հետաքրքրութեան համար էր սր ձեզի նայեցայ, այլ որովհետեւ շատ ցաւեցայ խորհելով որ ձեզ բանտ կը տանին: Որքան կը փափաքէի ձեզի յայտնել իմ այս զգացումս եւ ձեզ մխիթարելու համար բան մը գտնել»:

Բանտարկեալին դիմադիժը յանկարծ քաղցրացաւ, այնքան որ սէր ու համակրանք կար այդ աղերսող ձայնին մէջ:

«Պարոն, շարունակեց աղջնակը, ես խեղճ պգտիկ աղջիկ մըն եմ միայն, բայց Յիսուս զօրաւոր է եւ Անիկա ինծմէ շատ աւելի կը փափաքի ձեզ մխիթարել: Ես պիտի խնդրեմ Անկէ որ ձեր բանտին մէջ ձեր քով գայ, եւ զիտեմ որ պիտի գայ: Անիկա այնքան բարի է, եւ մեզ այնքան կը սիրէ...: Ո՛հ, կ'աղաչեմ, զայն մի մերժէք, ազօթեցէք Անոր, սիրեցէ՛ք զԱյն...»:

Ոստիկանները որ վայրկեան մը կանգ առած էին, վերսկսան քալել, եւ քիչ յետոյ բանտին ծանր դռները կը գոցուէին երեք մարդոց վրայ: Սակայն բանտարկեալը այլեւս նոյնը չէր, յոյսի եւ ուրախութեան նշով մը մտած էր անոր սրտէն ներս: Ու երբ քիչ մը աւելի վերջ, բանտին երէցը եկաւ զայն տեսնելու, եւ Փրկչին մասին խօսելու անոր, փոխանակ իր ակնկալած քարսիրտ ոճրագործը գտնելու, ինքզինքը գտաւ խոնարհած մեղաւորի մը, կուտրած սրտի մը առջեւ, որ պատրաստ էր Բարի լուրը ընդունելու:


Այս հրաշքը տեղի ունենալու համար ի՞նչ բան պէտք եղած էր: Փոքրիկի մը՝ հաւատքով ու քաղցրութեամբ լեցուն մէկ խօսքը:

Դո՛ւն, սիրելի փոքրիկ բարեկամս, որ այս տղերը կը կարդաս կամ կը լսես, երբեք խորհած ես արդեօք թէ Տէր Յիսուսի օգնութեամբ այս պիտի հրաշքներ կրնաս գործել, քարացած սրտեր կակուղցնելու, ապստամբ հոգիներ փրկատուի դարձնելու, անհաւատներ հաւատքի բերելու եւ ոճրագործներ զղշումի եւ փրկութեան առաջ:

սորդեւում չափ մեծ հրաշքներ: Մարդիկ չեն որ
այս հրաշքները կը գործեն, ճիշդ է, Աստուած է
որ կը գործէ, բայց Անիկա մարդիկ կը գործածէ
այդ նպատակին համար, եւ մարդոց մէջ ալ,
պզտիկի եւ մեծի, աղքատի եւ հարուստի, տգէ-
տի եւ գիտունի, տկարի եւ զօրաւորի խորու-
թիւն չի դնէր բնաւ: Հայրն Աստուած միայն
մէկ նպատակ ունի, այն է՝ որ մէկ հոգի չկորսու-
ւի, հապա որ ամէնը ապաշխարանքի զան և յա-
ւիտենական կեանք ժառանգեն: Ասոր համար
Ան իր սիրելի եւ մէկ հատիկ Որդին աշխարհ
դրկեց, որ ամէն ով որ Ասոր հաւատայ, ա՛լ ա-
զատ ըլլայ դատապարտութենէ եւ դժոխքէ ու
յաւիտեան Ասոր ներկայութիւնը վայելէ երկին-
քի փառաւորութեան մէջ: Ասիկա սքանչելիօրէն
պարզ եւ հիմնաւորօրէն գեղեցիկ լուր մըն է, չէ՞.
լաւ, այս լուրը պէտք է չզիտցողներուն տալ, եւ
դուն շատ աղէկ կրնաս ընել ատիկա թէ՛ ընկեր-
ներուդ եւ թէ՛ մեծերուն: Կ'ուզե՞ս: Բնաւ մի
խորհիր թէ՛ դուն պզտիկ ես և չես կրնար պատ-
մել այս բարի լուրը, թէ՛ մարդիկ քեզի մօտիկ
չեն ըներ եւ չեն հաւատար քու խօսքերուդ. այս
պատմութեան մէջի աղջիկը քեզի օրինակ առ-
այն ալ փոքր էր, բայց պատճառ եղաւ որ մեծ
ոճրագործ մը Յիսուսի դառնայ: Ան բնաւ չմտա-
ծեց թէ՛ այդ դաժան տեսքով բանտարկեալը թե-
րեւս իր խօսքին կարեւորութիւն անգամ չի տար,
թէ՛ երկու ոստիկանները գուցէ իրեն վրայ պի-
տի խնդան: Ինք պատրաստ սիրտ մը ունէր
Բրիստոսի սէրը մարդոց պատմելու: Աստ-
ուած տեսաւ այդ սիրտը, զայն գործածեց եւ ա-
հա հոգի մը մահուանէ դէպի կեանք անցաւ:
Դուք մէկ հոգի մը միայն, բայց քիչ է կը
կարծես: Դիտցիր որ եթէ մէկ հիւգի մը Աստուծոյ
դառնայ, երկինքի բոլոր հրեշտակներուն մէջ ու-
րախութիւն կ'ըլլայ: Վստահ եմ որ շատ պիտի
սիրէիր հրեշտակները ուրախացնել, եւ այդքա-
նը չէ միայն. դուն պիտի ուրախացնէիր նաեւ
տիեզերքը ստեղծող ամենակարող Աստուածը
եւ աշխարհի Փրկիչը եղող Տէր Յիսուս Բրիստո-
սը, այն որ թագաւորաց թագաւոր է: Ի՛նչ մեծ
պատիւ է ասիկա արդէն: Եւ տակաւին այսքանն
ալ չէ, եթէ հոգի մը Յիսուսի առաջնորդելու կա-
րող ըլլաս, Անկէ գովութիւն եւ վարձատրութիւն
պիտի ընդունիս իր երկրորդ անգամ գալուստին:
Խորհէ ասոր վրայ եւ տուր քու փոքրիկ սիրտդ
Ասոր գործը գործելու եւ Ասոր սէրը պատմելու:

Յ. Բ.

ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ



ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ.— Սեպտ. 16-20 Լիօնի մէջ
տեղի ունեցաւ Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիներու
Ը. համագումարը, որուն տեղեկատուութիւնը կը
փափաքինք յաջորդ թիւով ներկայացնել «Բան-
բեր»ի ընտանիքին եթէ Տէրը կամի: Այս Միու-
թեան ժողովի ընթացքին տեղի ունեցաւ Լիօնի
եւ շրջակայքի հովիւ Պատ. Ժ. Կ. Պարսումեանի
եւ Փօնտ Օպէնայի եւ շրջակայքի հովիւ Պատ. Ա.
Օ. Փափագեանի ձեռնադրութիւնը:

Հինգշաբթի գիշեր (Սեպտ. 19) սրահը լեցուած
էր խոռոն բազմութիւնով մը: Հանդիսաւոր մըթ-
նոլորտի մը մէջ բեմ բարձրացաւ Ա. Շ. Օ. ի տը-
նօրէն Տր. Պէոսն, համագումարիս սիրելի եւ
պատկառելի հիւրը Վեր. Ա. Զ. Եղոյեան եւ Մի-
ութեան նախագահ Վեր. Յ. Ն. Ղազարոսեան:
Ձեռնադրելի եղբայրները դէմ դիմաց կը նստին
բեմին յառաջակողմը:

Նուանդուն երգէ մը յետոյ Վեր. Եղոյեան պա-
տասխանատուութեան գիտակցութեամբ խորա-
պէս կը տպաւորէ ներկաները, ոտք հանելով
նախ Լիօնի եկեղեցիին անդամները, յետոյ
Փօնտ Օպէնասի եւ շրջակայքի եկեղեցիներ-
ուն երկու ներկայացուցիչները որոնք փափաք
յայտնած եւ հրաւէր ուղղած էին իրենց հովիւնե-
րուն այս ձեռնադրութեան համար:

Ապա Աստուծոյ խօսքով մեր երէց եղբայրը
յատակ եւ էական բացատրութիւններ տուաւ ժո-
ղովուրդին առանձնաշնորհներուն եւ անոնց պա-
տասխանատուութեանց մասին, հանդէպ իրենց
հովիւներուն:

«Եթէ հովիւները սխալ վարդապետութիւն բե-
րեն, ժողովուրդը պարտի ետ կենալ անոնցմէ,
սակայն ժողովուրդը պարտի ճանչնալ եւ մեծա-
պէս պատուել իր հոգեւոր վերակացուները: Պէտք
է յիշել զանոնք եւ անոնց հաւատքին նմանող
ըլլալ: Պարտի զանոնք մասնակից ընել իր երկ-
րաւոր բարեաց եւ խեղճ չթողուլ զանոնք որ
ինքն ալ իր կարգին հոգիովը խեղճ չմնայ»:

Հոգեշունչ երգէ մը յետոյ խօսք առաւ Վեր.
Տր. Փ. Պէոսն ցոյց տալով, որ թէեւ ցարդ հովիւ-
ները իրենց եղած կրկնակի դիմումները համա-
տօրէն մերժած էին ձեռնադրութեան մասին, տա-
կաւին ձեռնադրութիւնը հոգեւոր պաշտօնէութեան
մէկ բնականոն պարագաներէն մին էր եւ Սուրբ
Գրական իրողութիւն մը: Շեշտեց որ այս պաշ-
տօնիս համար հարկ եղած ամենէն կարեւոր

պատրաստութիւնը մտաւորը չէր միայն, այլ մանաւանդ Յիսուսի ոտից տակ ստացած դաստիարակութիւնը, եւ գործնական կեանքի եւ տառապանքի դպրոցին մէջ ստացած փորձառութիւնները կարեւոր են: Ապա մէկուն եւ միւսին խօսք ուղղելով, Տնօրէնը խիստ յուզեալ եւ անմոռանալի շեշտելով իր խորին երախտագիտութիւնը յայտնեց անոնց այնքան տարիներու ընթացքին Լիօնի եւ Արտէշի եկեղեցիներուն իրենց բերած բեղուն եւ անձնուէր ծառայութեան համար, եւ վեր հանեց անոնց կեանքէն եւ օրինակէն իր եւ բոլորին ստացած տպաւորութիւնները: Իմ բընարանս, «Փառաւորեցի եւ նորէն պիտի փառաւորեմ» խօսքը կարելի է ձեզի կիրարկել ըսաւ: Ի վերջոյ ձեռնադրութիւնը նկատեց պաշտօնէութեան պսակադրութիւնը, «անոնք սակայն վստահ եմ թէ յօժարութեամբ իրենց պսակը Աստուծոյ ոտից տակ պիտի նետեն» ըսաւ:

Ապա վեր. Յ. Ղազարոսեան խօսեցաւ յանուն Ֆրանսահայ Աւետ. Միութեան, հրաւիրելով գանոնք ստանձնելու այն պաշտօնն ու պատասխանատուութիւնը գոր. Տէրը դրած է արդէն իրենց վրայ, բնաբան առնելով Յովհ. ԺԵ. 16ը: Շեշտեց թէ Տէրն էր որ զիրենք ընտրած էր, եւ թէ մարդը ոչինչ էր ինքնին եւ անարժան այս պաշտօնին: Ընդգծելով Քրիստոսի գերիշխանութիւնը եւ յաւիտենական գերակայութիւնը, ցոյց տուաւ որ Տէրը կը յօժարէր Իր փառաւոր գործին կոչելու Իր ընտրածները, անոնց կեանքը պտղաբեր ընելու: Նա վեր հանեց նաեւ այն իրողութիւնը թէ Տէրը արդէն օրհնած էր զանոնք եւ պտղաբերած էր զանոնք մինչեւ հիմա, բայց դեռ կայ խոստում մը Տէրոյմէ, որ անոնց պտուղը մնայ: Բանախօսը այս խոստումին մէջ զըտնուած ազդաբարութիւնն ալ անոնց առջեւ դնելով խնդրեց հղբարաբար ստանձնել Ֆրանսահայ եկեղեցիներու ղեկավարութիւնը եւ ջանալ որ անոնց մէջ սկսուած գործը մնայուն ըլլայ արմատացած հաւատքի հաստատուն հիման վրայ:

Պրն. Կ. Պարսումեանի մենբրէն յետոյ, վեր. Ղազարոսեան երեք հարցում ուղղեց ոտքի կանգնած հղբարներուն, որոնք վսեմ «այո»ներով հաստատեցին իրենց ուխտերն ու յանձնառութիւնները: Ապա կատարուեցաւ ձեռնադրութիւնը ըսքանչելի պարզութեամբ եւ Տէրոյն օրհնեալ ներկայութեանը մէջ: Վեր. Եղոյեան մատուցանեց ձեռնադրութեան աղօթքները: Յուզիչ էր տեսնել երեք երէցները որոնք «սուրբ համբուրով» ողջագորեցին երկու նորընծաները զանոնք նոր իմաս-

տով մը ընդունելով հոգեշահութեան եւ սպասաւորութեան ամենօրհնեալ գործին մէջ:

Ի վերջոյ լսեցինք ձեռնադրեալ հովիւներուն վկայութիւնները: Վեր. Պարսումեան կարգաց Սաղմ. ՀԳ. 27-28 համարները: Աստուծոյ իրեն ըրած այցերը նկատեց իր կեանքին զլխաւոր զիծերը, եւ աւելցուց որ սրտովին հաւատալով Սբ. Մատեանին, անոր քարոզման նուիրումը էր եւ կ'ուխտէր աւելի քան երբեք նուիրուիլ եւ գործել:

Վեր. Ա. Փափագեան կարգաց Սաղմ. ՃԺԸ. 17 եւ նկարագրելէ յետոյ իր առանց Քրիստոսի անցուցած կեանքին թշուառութիւնները որք զինքը հասցուցած էին անձնասպանութեան վիճին եղերքը, փառաբանեց զԱստուծոյ իրեն պարգեւած փրկութեան, կոչումին, քաջալերանքին եւ օրհնութեանց համար:

Փառաբանութեան երգը փակեց ձեռնադրութեան յուզիչ հանդէսը: Մեր Միութեան ժողովին էն թանկագին գումարումներէն մին եղաւ այս հանդէսը: Լիօնի եկեղեցին հոգեւորապէս հարստացաւ, բոլորը անխտիր երախտագիտութեամբ կ'արտայայտուէին Աստուծոյ այս օրուն մէջ շնորհած օրհնութիւններուն համար: Ամէն տեղ փայլուն աչքեր եւ ճառագայթարձակ դէմքեր:

Ջերմիւ շնորհաւորելով մեր երէց հղբարները, կը գոհանանք Աստուծոյ որ ցարգ փառաւորեց Իր Որդին Յիսուսը անոնց կեանքին մէջ եւ կը մաղթենք եւ կ'աղօթենք որ Տէրը «նորէն փառաւորէ զԱյն» յառաջիկայ տարիներու ընթացքին:

Չ. Բ. ՊՈԻՏԱՔԵԱՆ

.....

Մարտիկոյ Հայ Աւետ. եկեղեցին իր շնորհաւորական ջերմ մաղթանքները կը յղէ Լիօնի եւ շրջակայից եւ Արտէշի ու Մօնթէլիմարի քոյր եկեղեցիներուն, անոնց հովիւներուն ձեռնադրութեան առթիւ եւ անոնց հետ կը բաժնէ իր սրբտաղին ուրախութիւնը: Սաղմ. Խ. 9, 10:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St - Savaournin Marseille

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷջ

(Շաբաթամիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԻ—Հովիւ' (Վեր.) 3. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, 13 R. Delille
15 30ին աղօթածողով, 1է, Rue de l'Eclipse
8 30 ին կիր. դաս մեծերու » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ
Սէնժուպիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ
Լէզ Օլիվ, Սէն ժէրոմ, Ս. Միքր. Ալօ, Պուլ
վար Օտօ մասնաւոր ընտանեացիներու մէջ:

Շաբաթամիջի ժողովներ

Բ. շր. ժամը 2ին Սէնժուպիէն,

Դ. շր. ժամը 2ին Սէն ժիւլիէն եւ Լէզ Օլիվ

Դ. շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե. շր. ժամը 20ին Սէն ժէրոմ

Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն ԼՈՒ.—Քարոզիչ Պատ. վահան Սահակեան
Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնա.

16 ին քարոզածողով:

Սէնժ ՄԱՐԿՐԻժ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌՈՒԱ.—Քարոզիչ Պատ. Ս. Պագգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն ՓԻԷՐ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆՔԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼՈՆՍ.—Հովիւ Բրոֆ. Գ. Գ. Խայկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence

(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ' Պատ. Ժ. Պարուսեան,

18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5^o Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆՔ ԷՔԻԷՆ—Քարոզիչ Պատ. Ի. Արրահամեան

2. Place de la Pareille

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՋ—Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,

10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով

37 Rue Tournefort Paris 5^o

Metro Mouhe Aut. K

Ամսոյն Գ. կիրակին ժամը 16. 30ին Ե.

Ք. Ը. երկսեռ միութեանց ժողովները

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux

ԱԼՖՈՐՎԻԼ.—Քարոզիչ Պր. Մ. Վէլլիւան

25 Rue Blanch, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՄԻԻՆԱԿ

ՇԱՀԵԿԱՆ ԳԻՐԳ ՄԸ

.....

«Յորելեանին Լոյսը» — Վայելուչ երեւութով 42 էջոց զըր-
քոյկ մը, յաւէտ ուսումնասիրութիւն մը բանախօսութեան ձեւով
ներկայացուած, քանզի ի բնէ որպէս բանախօսութիւն կարգացուած
է Բարիզի Հայ Աւետ. եկեղեցւոյ բեմէն: Սակաւն երբ կը կարգաց-
ուի, բոլոր ժողովուրդը միահմուտ կը խնդրէ որ տպագրուելով շա-
տերու ալ մատչելի ըլլայ այն: Այս փափաքը Բարիզի Աւետ. ե-
կեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ իրականացուած է:

Յորելեան ըսելով Ս. Գրքի Հայերէն լեզուի թարգմանու-
թեան հազար հինգ հարիւրամեակին Յորելեանը ըսել կ'ուզենք:
Այս Յորելեանը տօնեցին տարիէ մը ի վեր ամէն երկրի մէջ եւ
ամէն տեղ: Թերթեր խիստ շահեկան յօդուածներ եւ խմբագրա-
կաններ նուիրեցին այս խնդրոյն վերաբերեալ յաւէտ բանասիրա-
կան, իսկ այս զրքոյկը բանասիրական ուսումնասիրութիւն մ'ըլլա-
լով մէկտեղ անկէ աւելին ցոյց կուտայ, Սր. Գրքի թարգմանու-
թեան ղերը հայ հոգեւոր կեանքի իրականութեան մէջ անցեա-
լին, ներկային ու ապագային մէջ: Չտօնենք միայն թարգմանու-
թեան յորելեանը, այլ ապրինք այն հոգեւոր յոյզերը, իրականա-
ցնենք մեր մէջ հոգիներու ծառայութեան այն սուրբ տենչը զոր
ունեցան մեր նախահայրերը, Ս. Սահակ, Ս. Մհարոպ եւ սուրբ
թարգմանիչները:

Հեղինակն է Պատ. Զաքարիա Պուտաքեան, Բարիզի Հայ
Աւետ. եկեղեցւոյ հովիւը: Իր անուան յիշատակութիւնը բաւ է
ցոյց տալու զրքին արժէքը: Անոր յօդուածները ամսէ ամիս ծա-
նօթ եւ մեծապէս գնահատուած են «Բանբեր»ի ընթերցողներուն
կողմէ:

Գրքին գինն է 4 ֆր.

Դիմել կամ խմբագրութեանս հասցէին, կամ Հեղինակին

Mr. Z. P. Boubakian

11 bis, Villa de la Gare. Vanves (Seine).

France